Որեւէ ուսումնասիրություն եղծել է «Իմ քայլի» հետ կապված: Եթե ընտրություններից առաջ Փաշինյանն ու Աննա Հակոբյանը «կապ չունեին», իսկ ընտրություններից հետո պարզվեց՝ «ընտանիք են», եւ նա առաջին տիկինն է, ապա ակնհայտ է, որ օրենք է խախտվել: Օրենքը գործել է ընդդիմության նկատմամբ, այլ ոչ՝ իշխանության:

Կարդացեք՝ էջ 4

Դատելով ադրբեջանական մամուլի քննարկումներից՝ խնդիր են դրել ամեն գնով Հայաստանում հասնել Սահմանադրության փոփոխության: Սա զուտ քաղաքական կամ իրավական հարց չէ. Ալիեւն ուզում է ոչնչացնել մեզ բարոյական եւ հոգեբանական դաշտում, ուզում է ասել, որ ինքն է որոշելու, թե Հայաստանն ինչ սահմանադրություն ունենա:

Կարդացեք՝ էջ 6

«Ծիրանը կտանենք Լեհաստան», «ծաղիկները՝ Բալթիկա» եւ այլ նմանատիպ թեզերը գուցե մեդիա-քարոզչական էֆեկտ ունեն, բայց զրոյական արդյունք՝ ծխածածկույթ են, որի հետեւում ոչինչ չկա: Փաշինյանի համար հիմա շատ կարեւոր է, որ Մոսկվան գոնե մի կեսբերան ճանաչի Հայաստանում տեղի ունեցած պառլամենտական ընտրությունները:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 97 (4232), 17 հունիս, չորեքշաբթի, 2026

www.hraparak.am

Կապանի համայնքապետ Գեւորգ Փարսյանը, Սյունիքից հասնող լուրերի համաձայն, ընտրություններից հետո մեկուսացել է, գրեթե չի շփվում ոչ մեկի հետ: Ասում են՝ անակնկալի է եկել ընտրությունների արդյունքներից՝ նախապես կարծելով, որ իրեն տրված վստահության քվեն, իր կատարած աշխատանքները, իր հանդեպ հարգանքը խորհրդարանական ընտրություններում էլ կաշխատեն, եւ ժողովուրդը, իրեն հարգելով, կընտրի Արման Թաթոյանի «Միասնության թեւերին»: Հիշեցնենք, որ «Շանթ դաշինք» կուսակցությունը Թաթոյանի հետ նույն ցուցակով մասնակցեց ընտրություններին, Փարսյանն էլ այդ դաշինքի քվոտայով է համայնքապետ դարձել: Նա խոստացել է, որ Թաթոյանի ղեկավարած ուժը ջախջախիչ հաղթանակ է տանելու, սակայն ընտրությունների արդյունքներով ոչ միայն ՔՊ-ն էր առաջատարը Կապան քաղաքում եւ համայնքում՝ 10 հազարից ավելի ձայնով, այլեւ ընդդիմադիր մյուս ուժերը գրեթե չէին զիջում «Միասնության թեւերին»: Օրինակ, «Ուժեղ Հայաստանը» 5 հարյուր ձայն էր պակաս ստացել՝ 3 հազար 717, Քոչարյանի «Հայաստան» դաշինքը՝ 2 հազար 103, ինչը համարում են ձախողում՝ հաշվի առնելով, որ Աննա Գրիգորյանը կապանցի է:

Հունիսի 7-ի ընտրություններից հետո երեկ խորհրդարանի առաջին նիստն էր, որին նաեւ Նիկոլ Փաշինյանն էր մասնակցում: Բայց ԱԺ դահլիճը հոգեհանգստի սրահ էր հիշեցնում. ՔՊ-ական պատգամավորները եւ նախորդ տարվա բյուջեի կատարողականի քննարկմանը եկած կառավարության անդամները շատ մռայլ էին ու մտահոգ: «Հաղթած» իշխանականները բոլորովին հաղթողի տեսք չունեին, ընկճված էին ու անտրամադիր: Իշխանական մեր աղբյուրները խոստովանեցին, որ իրենց համար անսպասելի էր, որ այդքան չարչարանքից ու ռեսուրսներ ծախսելուց հետո չկարողացան 50 պլյուս հավաքել: Երկրորդ. մեծ անհանգստություններ ունեն՝ կապված Ռուսաստանի հետագա պահվածքի հետ, որը բավական չէ՝ չի ճանաչել հունիսի 7-ի ընտրությունների արդյունքները, դրան գումարած՝ կոշտ հայտարարություններ է անում եւ տնտեսական սանկցիաներ կիրառում Հայաստանի նկատմամբ: Իշխանական շրջանակներում խոսում են, որ առաջիկայում գազի գինն էլ է բարձրանալու, իսկ այլընտրանքի բացակայության պայմաններում ՌԴ-ի սանկցիաները կարող են լուրջ հետեւանքներ առաջացնել իրենց իշխանության համար:

Դատավոր ու դահիճ

Այսպես որ շարունակվի, Հայաստանում կարելի է փակել դատախազություն, քննչական, դատարան՝ Նիկոլ Փաշինյանին նշանակել «գլխավոր դահիճ», որը լայվերով մեղադրական դատավճիռներ կարձակի, պատիժներ կսահմանի, ինքն էլ կիրականացնի: Կարող են չեղարկել բոլոր օրենքներն ու ընտրությունները, այսուհետ Նիկոլ Փաշինյանը կարող է ասուլիս հրավիրել եւ ընտրությունների արդյունքները հրապարակել, կարող է անգամ ընտրություններն իսպառ վերացնել՝ ինչ իմաստ ունի նման բան կազմակերպելը, եթե ընտրություններին մասնակցելը համարվում է քրեորեն պատժելի արարք, եւ մասնակցած ուժերն ու նրանց ղեկավարները հռչակվում են հանցագործներ: Նախընտրական փուլում եւ ընտրությունների օրվանից ի վեր Փաշինյանն ամեն օր խայտառակ ելույթներ է ունենում եւ «դատավճիռներ» արձակում. ընդդիմությունն ընտրակաշառք է բաժանել, ընդդիմությանն ընտրող քաղաքացիներն անխտիր ընտրակաշառք են վերցրել: Ընդդիմության առաջնորդները՝ առանց բացառության, հանցագործներ են, պետք է նստեն: Ընդդիմադիր ուժերին թույլ չենք տալու այսուհետ մասնակցել ընտրություններին եւ այլն: Եվ քանի որ իրավապահ համակարգը հիմնավորապես ստրկացված է՝ չկա մի դատախազ ու դատավոր, մի քննիչ ու ԱԱԾ աշխատակից, որ այս ելույթները որպես հրահանգ չընդունի եւ չսկսի կատարել: Այլեւս երկրում ոչ օրենքն է գործում, ոչ Սահմանադրությունը, ոչ անմեղության կանխավարկած կա, ոչ դատական իշխանությունների անկախությունից է որեւէ հետք մնացել: Երեկ տեղեկացանք, որ դատախազությունը միջնորդություն է տարել ԿԸՀ՝ Ռոբերտ Քոչարյանին անձեռնմխելիությունից զրկելու համար: Վահագն Հովակիմյանը, իհարկե, այս հանձնարարությունն էլ հնազանդորեն կկատարի: Բայց պարզ չէ, թե որն է Քոչարյանի մեղքը՝ ընտրություններին մասնակցելը, Փաշինյանին համբալ ասելը:

Վերին Լարսում արդեն մոտ քսան օր է՝ քառսային իրավիճակ է ստեղծվել: ՌԴ-ից Հայաստան վերադարձող բեռնատարների կիլոմետրանոց շարք է կանգնած Լարսում: Հարյուրավոր բեռնատարներ օրերով սպասում են, որ իրենց թույլ տրվի հատել ռուս-վրացական սահմանը, որ գան հասնեն Հայաստան: Վարորդներից մեկը մեզ պատմեց, որ հերթ չի հասնում՝ կտրոն ամրագրելու համար, օրական մի քանի բեռնատար է ռուսական կողմը բաց թողնում, մյուսները կանգնած են մնում: Հիշեցնենք, որ «Ռոսսելխոզնադզորը» մայիսի 30-ից սկսած եւ հունիսի առաջին օրերին մի շարք սահմանափակումներ է մտցրել Հայաստանից գյուղմթերք, այդ թվում՝ լոլիկ, վարունգ, պղպեղ, ելակ, կեռաս, ծիրան, դեղձ, խաղող եւ այլ ապրանքներ ներմուծելու նկատմամբ: Սահմանափակումների հետեւանքով ծանր վիճակում են հայտնվել ոչ միայն գյուղմթերք արտադրողները, այլ նաեւ՝ բեռնափոխադրողները:

ԱՐԵՎՄՈՒՏՔԸ ԹՈՒՅԼ ՉԻ ՏԱԼԻՍ ԶԻՋՈՒՄՆԵՐԻ ԳՆԱԼ

Իշխանական շրջանակներից տեղեկացանք, որ Արեւմուտքը շոկի մեջ է խորհրդարանական ընտրությունների արդյունքներից: Բանն այն է, որ ակնկալել են, թե իրենց կողմից Արցախի վաճառքից հետո Հայաստանում հրահրած հակառուսական տրամադրությունները շոշափելի արդյունք կտան, եւ հունիսի 7-ին ռուսամետ համարվող ուժերը համատարած կմերժվեն, սակայն պարզվեց՝ հասարակությունն այնքան է մերժում Նիկոլ Փաշինյանին, որ պատրաստ է անգամ ռուսամետ կողմնորոշում ունեցող ընդդիմադիր ուժերին ձայն տալ: Կես միլիոնից ավելի ձայնն անակնկալի է բերել արեւմտյան կենտրոններին: Մեզ ասացին, որ Արեւմուտքը հնարավոր ճնշում է գործադրում, որ Փաշինյանը զիջումների չգնա Ռուսաստանի հետ փոխհարաբերություններում: Ծրագրում են, որ ՀՀ իշխանության հակառուսական քաղաքականությունն այնքան կգազազեցնի ՌԴ-ին, որ նա տնտեսական սանկցիաներն էլ ավելի կխստացնի, եւ Հայաստանում հակառուսական տրամադրություններն էլ այնքան կաճեն, որ առճակատումը կմեծանա, եւ այդ հիմքով էլ Փաշինյանը դուրս կգա ՀԱՊԿ-ից ու Հայաստանից դուրս կբերի 102-րդ ռազմաբազան:

ՄԻԱՅՆ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՎԱՐԱՐ ԵՆ, ՈՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԵՂԱՐԿՎԵՆ



Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Երեկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը չեղյալ համարեց երեք ընտրատեղամասերի ընտրությունների արդյունքները, ապա մերժեց նույն ընտրատեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու մասին ընդդիմադիր ուժերի դիմումը: Ընդդիմադիրները կարծում են, որ այս քայլով ԿԸՀ նախագահ Վահագն Հովակիմյանը հերթական անգամ ապացուցեց, որ շարքային ՔՊ-ական ուսապարկ է եւ ենթարկվում է բացառապես Նիկոլ Փաշինյանին: Ընդդիմությունն այժմ պատրաստվում է դիմել Սահմանադրական դատարան՝ ընտրությունների արդյունքները չեղյալ համարելու նպատակով, բայց մտավախություն կա՝ քանի որ Սահմանադրական դատարանը կազմված է ՔՊ-ականներից, ճիշտ այնպես, ինչպես ԿԸՀ-ն, եւ ոչ օբյեկտիվ ու կողմնակալ դատավորներից, դժվար թե արդար եւ օրենքի տառին համապատասխան որոշում կայացնի: Հիշեցնենք, որ 2021 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրություններից հետո էլ Ռոբերտ Քոչարյանի գլխավորած «Հայաստան» դաշինքը դիմել էր ՍԴ՝ նույն պահանջով, սակայն ՍԴ-ն մերժեց դիմումը, եւ մոռացվեց այդ պրոցեսը: Թեմայի մասին «Հրապարակը» զրուցել է ՍԴ նախկին դատավոր **Կիմ Բալայանի** հետ:

- Ընդդիմադիր ուժերն այժմ ցանկանում են դիմել Սահմանադրական դատարան: Օրենքը փաստացի պահանջում է, որ կամ նոր ընտրություն նշանակվի, կամ վերաքվեարկություն տեղի ունենա այն ընտրատեղամասերում, որտեղ ընտրությունների արդյունքները չեղյալ էին համարվել, սակայն ՔՊ-ական Վահագն Հովակիմյանն անդրդվելի գտնվեց՝ կատարելով իշխանության հրահանգը, եւ մերժեց վերաքվեարկություն անցկացնելու պահանջը: ՍԴ-ն այժմ նույն վերաքվեարկության հետ կապված ինչ որոշում կարող է կայացնել, եթե առաջնորդվի օրենքով:

- Այստեղ չի կարող երկրորդ կարծիք լինել: Հայաստանում 2018 թվականից միայն մի օրենք է գործում, դա բեսպրեդելի օրենքն է: Կենտրոնական ընտրական հանձնաժողովն օրենք խախտեց, այդ կառույցը չուներ նման որոշում կայացնելու իրավունք: Ինչ իրավունքով քաղաքացիների ձայները համարեցին չեղյալ ու նոր ընտրություն այդ տեղամասերում չկազմակերպեցին, այն դեպքում, երբ ԲՀԿ-ն ստացած ձայներով արդեն իսկ անցնում էր խորհրդարան: Նման իրավունք ով է վերապահել ԿԸՀ-ին՝ ոչ ոք, բայց, փաստորեն, նման ապօրինի որոշում կայացրին: Այդ արարքը քրեորեն հետապնդելի արարք է: Ինչ վերաբերում է այսօրվա Սահմանադրական դատարանին, ապա այն ձեւավորվել է հակասահմանադրական ճանապարհով, ինչ սպասել նման դատարանից, արդյոք կկայացնի արդար որոշում՝ օրենքի տառին համապատասխան, ես կարծում եմ, որ ոչ, խիստ կասկածում եմ նրանց անաչառության վրա….

- Այսինքն՝ կարծում եք, որ ինչպես ԿԸՀ-ն է Փաշինյանի ձեռքի խաղալիքը, այնպես էլ՝ ՍԴ-ն:

- Հույսը մահանում է վերջում, ամեն դեպքում՝ շանսերը քիչ են, որ ՍԴ-ն արդարության հետքերով կգնա: Այդ դատարանը ձեւավորվել է ապօրինաբար: ՍԴ դատավորներին ապօրինաբար ազատեցին աշխատանքից եւ ինչ-որ մարդկանց ապօրինաբար դարձրին դատավոր ու մտցրին ՍԴ: Իհարկե, այնտեղ լավ մասնագետներ էլ կան, ովքեր իսկապես արժանի են դատավորի կոչմանը, սակայն նրանք կազմում են փոքրամասնություն:

- Եթե մի պահ պատկերացնենք, որ Նիկոլ Փաշինյանի փոխարեն ունենք ազնիվ, արդար, օրենքը պահող ղեկավար, որը չի միջամտում օրենսդիրի գործերին, Սահմանադրական դատարանն այդ պարագայում ո՞ր դեպքում կարող է ընտրությունների արդյունքները չեղյալ համարել եւ նոր ընտրություններ նշանակել:

- Եկեք վերցնենք «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ղեկավարի հայտարարություններն այն մասին, որ համատարած կաշառք են բաժանել: Այն, որ այդ մարդը սուտասան է, եւ նրան ոչ մի գիտակից մարդ չի հավատում, դա այլ հարց է, բայց որ մարդը նման հայտարարություններ է անում, միայն դա բավարար է, որպեսզի այս ընտրությունները ճանաչվեին անվավեր եւ նոր ընտրություններ նշանակվեին: Ընտրակաշառքների մասին հայտարարությունը, այն էլ՝ մի քանի անգամ, բավականին լուրջ փաստարկ է, սակայն մեր երկրում, փաստորեն, նման ընտրությունները համարվում են արդար ընտրություններ: Ո՞նց կարող է կաշառք բաժանվել, եւ դա չազդի մարդկանց քվեի վրա:

- Այսինքն՝ կո՞ղմ եք, որ նոր ընտրություններ լինեն:

- Ես համոզված եմ, որ Նիկոլ Փաշինյանն ազնիվ ընտրության պարագայում չի ունենա մեծամասնություն: Այս ընթացքում միայն շտաբի պետ Ասրյանը ճիշտ հայտարարություն արեց, ինչի համար իրեն շնորհակալ եմ. փաստորեն, սրանց մեջ էլ կան ազնիվ մարդիկ: Մարդն ասաց, որ առավոտյան ժամը 8-ից զինվորներին տարել են քվեարկության, սակայն քանի որ շատ են զինվորներին տարել դեսուդեն, նրանք չեն հասցրել երեկոյան 20:00-ին հասնել վերջին տեղամաս, արդյունքում ուշ են հասել:

- Այսինքն՝ վստահ եք նաեւ, որ ընտրությունները կեղծվել են՝ իշխանության ձեռամբ:

- Ամբողջությամբ են կեղծվել՝ Նիկոլ Փաշինյանի ղեկավարությամբ:

- Իսկ ինչ եղանակով են կեղծել, տարբեր վարկածներ են շրջանառվում: Արդյո՞ք հնարավոր էր 700 հազար ձայն կեղծել:

- Բազմաթիվ փաստարկներ կան: Եթե մեր երկրում նորմալ իրավապահ համակարգ գործեր, վաղուց բացահայտած կլիներ, թե ինչպես են կեղծվել ընտրությունները, բայց քանի որ չունենք, պատկերը սա է: Միայն այն հանգամանքը, որ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձինք, ՀՀ անձնագրեր եւ ՀՀ հաշվառում ունենալով Հայաստանում, չեն կարողացել ընտրություններին մասնակցել, միայն այդ մեկ փաստը բավարար է, որպեսզի ընտրությունների արդյունքները ճանաչվեն անվավեր: Միջազգայնորեն այդ մարդկանց իրավունքները ճանաչված են, ամբողջ աշխարհում ղարաբաղցիները ման էին գալիս ՀՀ անձնագրով, որի մեջ նշված էր բնակության վայրը: Ամբողջ աշխարհը նրանց այդպես ընդունում էր, իսկ հիմա ո՞նց եղավ, որ Հայաստանն ասում է, որ նրանք ՀՀ քաղաքացիներ չեն: Ապօրինություններն այնքան շատ են ու տեսանելի, որ ասելու չէ:

ԱՅՍ ՊԱՀԻՆ ՈՒՂԻՆԵՐ ԵՆՔ ՓՆՏՐՈՒՄ, ԹԵ ՈՐ ԵՐԿԻՐ ԾԱՂԻԿ ԱՐՏԱՀԱՆԵՆՔ

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հայկական արտադրանքի նկատմամբ ռուսական զգալի սահմանափակումներից հետո վարչապետ Նիկոլ Փաշինյանը ջերմոցատերերին «աչքալուսանք» տվեց, թե ծաղիկների եւ բանջարեղենի առաջին խմբաքանակներն արդեն դուրս են եկել Հայաստանից՝ դեպի Եվրամիության եւ այլ երկրների շուկաներ: Էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանն էլ իր հերթին հայտարարեց, որ կառավարությունն աջակցության ծրագիր կընդունի, որով կսուբսիդավորվի ջերմատնային արտադրանքի՝ լոլիկի, պղպեղի, ելակի եւ ծաղիկների արտահանումը: Կառավարության հաջորդ նիստում իսկապես նման որոշում ընդունվեց՝ կփոխհատուցվի Եվրամիություն արտահանվող թարմ մրգերի, բանջարեղենի, ծաղիկների, բրենդիի (կոնյակի) արժեքը՝ որոշակի գներով միավոր ապրանքի դիմաց:

2024 թվականին, գործադիրի որոշմամբ, «Պիոն» ՍՊԸ-ին թույլատրվել էր օգտվել գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակում ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից: Ընկերությունը Ֆանտան համայնքում կառավարության աջակցությամբ հիմնեց 4,3 հա տարածքով ջերմատուն, որտեղ աճեցնում են հոլանդական վարդեր եւ պիոններ: Ինչպես նաեւ՝ այս ընկերությունը նախատեսում էր իրականացնել 3 մլրդ դրամի ներդրում՝ սարքավորումների եւ հումքի ձեռքբերման, շինարարական աշխատանքների իրականացման համար: Ներդրումային ծրագրի շրջանակում մինչեւ 2028 թ. ընկած ժամանակահատվածում նախատեսվում է ստեղծել 60 նոր աշխատատեղ:

Երկու ամիս առաջ Նիկոլ Փաշինյանն անձամբ այցելել էր ջերմատուն, վարդը ձեռքին ման եկել եւ խոստացել, որ պետությունն ամեն ինչ կանի, որ այս ջերմոցի արտադրանքն արտահանվի: Ընկերության աճեցրած հոլանդական վարդերն առաջին անգամ պետք է արտահանվեին մայիսին: Սակայն հայկական արտադրանքի նկատմամբ ռուսական զգալի սահմանափակումներից հետո ընկերությունը ոչ միայն չի կարողանում ծաղիկներն արտահանել եվրոպական երկրներ, այլեւ անգամ ինքնարժեքից ցածր չի կարողանում վաճառել:

Ընկերության հիմնադիր **Ֆաբրիս Արման Փինարբասի Հակոբը** մեզ հետ զրույցում ասաց, որ այս պահին վարդերը վաճառվում են Հայաստանում եւ Վրաստանում՝ ինքնարժեքից ավելի ցածր գնով. «Այս ճգնաժամից, միանշանակ, տուժում ենք: Այս պահին ուղիներ ենք փնտրում, քննարկումներ անում, թե որ երկիր ծաղիկներն արտահանենք: Դեռ պետք է նմուշներ ուղարկենք, բանակցություններ անենք: Այս պրոցեսի մեջ ենք: Այս պահին վարդի գներն ինքնարժեքից պակաս ենք վաճառում թե՛ Հայաստանում, թե՛ Վրաստանում: Բայց քանի որ էլ Ռուսաստանի շուկա չենք կարողանում տանել, մինչեւ եվրոպական շուկաներ գտնենք, իսկ ծաղիկն օրօրի աճում է, եւ պետք է վաճառք լինի, եթե ոչ՝ ծաղիկները պետք է թափվեն: Հիմա կորստով ենք աշխատում»:

Ջերմոց եք հիմնել, բավականին ներդրում արել՝ եւ առաջին անգամ պետք է ծաղիկ արտահանեիք, դրա փոխարեն կորստով եք աշխատում, իսկ եթե ուղիներ չգտնեք, ինչ պետք է անեք: «Դե, ջերմոց է, կարող ենք ծաղիկները փոխել՝ վարունգ դնել, լոլիկ, սալաթ: Բայց հիմա մենք վարդեր ենք դրել, եթե չարդարացնի, շատ մեծ կորուստ կունենանք՝ կթափենք»: Իսկ եթե լոլիկ ու վարունգ դնեք եւ դա էլ չկարողանաք արտահանել: «Դե, դա ես օրինակ բերեցի, եթե այսպես շարունակվի, պետք է ուսումնասիրենք, դնենք մի բան, որ կարողանանք ներքին շուկայում վաճառենք»: Վարչապետը, ապա էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանն օրերս հայտարարեցին, որ արդեն հայկական մթերքը Եվրոպա է արտահանվում, եւ կառավարությունն էլ աջակցում է ջերմոցատերերին: «Այո, այդպիսի տեղեկություն կա, բայց որ ասեմ՝ ով ինչ է արտահանում, չգիտեմ: Եթե չեմ սխալվում, Ռումինիա ուղարկվում է, դրա համար էլ մենք այս պահին բանակցում ենք: Ուղարկվում է, որ ասեմ՝ մեծ քանակով, դրանից տեղյակ չեմ, ոնց հասկացա՝ փորձում են ուղարկել: Հույս ունեմ, որ ճանապարհները կամաց-կամաց կբացվեն: Մի քանի անգամ նախարարը մեզ կանչեց, բոլոր ջերմոցատերերին առաջարկեցին, որ ամեն մի ծաղիկի 37 դրամն իրենք սուբսիդավորեն, սահման անցնելու տուրքերից ազատեն: Թե դա ոնց է աշխատում, ես չեմ փորձարկել»:

*Հարցազրույց ՔՊ-ական պատգամավոր **Վահե Ղալումյանի** հետ*

ՊԵՏՔ Է ԱՄԵՆ ԻՆՉ ԱՆԵՆՔ, ՈՐ ՀԱՍՆԵՆՔ ՄԵՐ ՈՒԶԱԾԻՆ, ՆԱԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԵԼՈՒՆ

- Գո՞հ եք ընտրությունների արդյունքներից:

- Այո, գոհ ենք:

- Բայց դուք սահմանադրական մեծամասնություն ստանալու ակնկալիք ունեիք, մինչդեռ 50 տոկոս ձայն էլ չհավաքեցիք, այն դեպքում, երբ խոդի էիք տվել վարչական ռեսուրսը...

- Այո, ակնկալում էինք, բայց, ցավոք, չստացվեց:

- Հետեւելով իշխանության գործողություններին՝ թոշակի տեսքով ընտրակաշառք, բժշկական պարտադիր ապահովագրություն, վարչական ռեսուրսի տոտալ չարաշահում, ենթադրվում էր, որ դուք 50 պլյուս չէ, այլ «200 տոկոս» պիտի ստանայիք, սա ցույց չի՞ տալիս, որ մարդիկ իրականում ձեզ մերժում են:

- Ի՞նչ ա նշանակում՝ 200 պլյուս, մենք նման ակնկալիք չենք ունեցել, ախր, ըտենց թիվ չկա էլ, ո՞նց եք նման բան ասում:

- Դուք պատկերավոր խոսքի մասին լսե՞լ եք:

- Դա Ձեր ձեւակերպումներն են, որի հետ համաձայն չեմ:

- Համաձայն չե՞ք, որ մարդկանց պարտադրել եք ձեր հանրահավաքներին ներկա գտնվել, քվեարկել, ապացույցներ ներկայացնել վերադասին, հակառակ դեպքում կազատվեն աշխատանքից:

- Դուք մեզ խառնում եք ընդդիմության թեկնածուների հետ:

- Եթե ժողովուրդը ձեզ սիրում էր, ընդունում, այդ դեպքում ինչո՞ւ ձեր սպասելիքները չարդարացան, սահմանադրական մեծամասնություն չունեցաք:

- Որովհետեւ ընդդիմադիր որոշ ուժեր փող եւ համատարած ընտրակաշառք կիրառեցին:

- Ունե՞ք ապացույցներ:

- Դատական գործեր կան, հարյուրից ավել կալանավորված անձինք:

- Բայց դատարանի որոշում չկա, ինչո՞ւ եք մարդկանց անմեղության կանխավարկածը խախտում, հատկապես որ փորձագետները վստահ են, որ ընտրակաշառքի մասին տարածված ձայնագրությունները կեղծված են:

- Դատարանի որոշումը կոնկրետ իմ համար... ես քաղաքական գնահատական եմ տալիս, որովհետեւ ես դա կոնկրետ տեսել եմ:

- Ի՞նչ եք տեսել՝ որ ընդդիմությանը ձայն տված կես միլիոն մարդիկ կաշառքո՞վ են ընտրել:

- Ասում եմ՝ ես տեսել եմ:

- Ծառուկյանին էլ էիք տարիներ շարունակ ընտրակաշառք բաժանելու մեջ մեղադրում, վերջում արդարացվեց:

- Ես քաղաքական դաշտում ընդդիմության մեջ ըտենց ուժ չգիտեմ, ով ֆինանսական ռեսուրսից բացի ուրիշ ռեսուրս ունի:

- Իշխանությունն ամենաշատն է ֆինանսական ռեսուրսի տիրապետում, ու մարդիկ հենց ձեզ էին մեղադրում այդ ռեսուրսը չարաշահելու հարցում, դրան գումարած վարչական ռեսուրսը:

- Մեր մասով գործ չկա հարուցված, վարչական ռեսուրսի կիրառումն ու ընտրակաշառքն էլ տարբեր բաներ են:

- Գործեր հարուցողը դուք եք: Եվ դուք չունեք ապացույցներ, որ ընդդիմությունը կաշառք է բաժանել, բայց պնդումներ եք անում՝ այն դեպքում, երբ բոլորը տեսան, թե ինչպես եք քվե գողանում:

- Ես չեմ ապացուցողը, դատարանը կապացուցի:

- Այդքան վստահ մի եղեք, Ծառուկյանի գործը՝ ձեզ ապացույց:

- Քանի՞ այդպես գործեր կան, գիտե՞ք... երբ կարդարացվեն, նոր կասեք:

- Ձեր իշխանությունն ավելի վատ բան է արել՝ ԲՀԿ-ին զրկեց ԱԺ մտնելուց, որ 3/5 մեծամասնություն ունենա, դուք չգիտեմ ինչերից եք խոսում:

- ԲՀԿ-ին մենք չենք զրկել, ԲՀԿ-ին ՀՀ քաղաքացիներն են զրկել իրենց տված քվեներով:

- Բոլորը տեսան, որ ԲՀԿ-ն անցնում է խորհրդարան, ձեր կամակատար Վահագն Հովակիմյանի աճպարարության արդյունքում ԲՀԿ-ն դուրս մնաց:

- Կողմնորոշված հարցեր մի տվեք՝ ձեր Վահագն Հովակիմյանը: Դուք ԿԸՀ-ի պարզաբանումը կարդացե՞լ եք:

- Իսկ դուք անգամ իշխանական դիտորդների հայտարարությունները կարդացե՞լ եք, որ եթե երկու տեղամասի արդյունքները չեղյալ հայտարարելն ազդել է ընտրությունների արդյունքների վրա, ապա, ըստ օրենքի, ԿԸՀ-ն պարտավոր է վերաքվեարկություն նշանակել, ինչը չարվեց հենց այդ նպատակով, որ ԲՀԿ-ի մանդատները գողանաք:

- Օրենքի խախտում է եթե եղել, կարող եք դուք էլ միանաք ընդդիմությանը եւ դատի տաք:

- Եթե ընդունենք, որ ԿԸՀ-ն ճիշտ է ու զինվորների քվեարկության հիմքով անվավեր ճանաչեց երկու ընտրատեղամասի արդյունքները, միայն այդ երկուսո՞ւմ էին զինվորներ քվեարկել, պարզապես դրանց մասին հրապարակումներ եղան, իսկ քանիսը չեն հրապարակվել, ուրեմն խախտումները եղել են համատարած, եւ հենց այդ հիմքով էլ ընտրությունների արդյունքները չի կարելի ընդունել:

- Այդ հիմքը ճիշտ չեք հասկացել, այդ հիմքով չեն չեղարկվել:

- Դրա համար են չեղարկվել:

- Ոչ, ասում եմ՝ այդ հիմքով չեն չեղարկվել:

- Լավ, հիմա փաստն այն է, որ սահմանադրական մեծամասնություն չունեք, չեք կարող Ալիեւի տնային առաջադրանքը կատարել՝ Սահմանադրությունը փոխել, այսինքն՝ ձեր խոստացած խաղաղությունը վերջացմ՞վ, սեպտեմբերին պատերազմ է լինելու:

- Մենք ունենք այն, որ ՔՊ-ն միայնակ 17 ուժերից շատ ձայն է հավաքել:

- 2017-ին էլ Սերժ Սարգսյանի ՀՀԿ-ն էր նույն արդյունքները գրանցել, այդքան շատ մի պարծեցեք, հատկապես այս ընտրությունները փաստեցին, որ դուք ընտրություն կեղծելու հարցում անգերազանցելի եք:

- Ես պարծենում եմ ոչ թե ձայներով, այլ ՀՀ քաղաքացիներով, իսկ Սերժ Սարգսյանը գիտենք՝ ո՞նց է ընտրվել:

- Ձեզ էլ են նույն բանն ասում, որ չկեղծեիք, չգողանայիք...

- Ասողները հնարավորություն ունեն դատարանում ապացուցելու:

- Վերադարձեք Ալիեւի տնային առաջադրանքի մասին հարցին:

- Եկեք սպասենք՝ ԱԺ-ն ձեւավորվի, գանք աշխատենք, կքննարկենք, պետք է ամեն ինչ անենք, որ հասնենք մեր ուզածին, այդ թվում՝ Սահմանադրությունը փոխելուն:

- Ի դեպ, լուրեր կան, որ Ձեր եղբորը՝ Հայկ Ղալումյանին, Փաշինյանն առաջիկայում ազատելու է Տավուշի մարզպետի պաշտոնից եւ իր եղբորորդուն՝ Սիփանին է նշանակելու: Ճի՞շտ է:

- Ոչ, ես չեմ լսել նման բանի մասին:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՕՐԵՆՔՆ ԱՍՈՒՄ Է, ՈՐ ՎԵՐԱՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ

Գագիկ Ծառուկյանի ԲՀԿ-ին դուրս թողեցին խորհրդարանից: Մինչդեռ ԲՀԿ-ն հավաքել էր անցողիկ 4 տոկոսը, սակայն իշխանությունների անմիջական հրահանգով Վահագն Հովակիմյանի ղեկավարած կառույցը, անվավեր ճանաչեց 3 ընտրատեղամասի քվեարկության արդյունքները, եւ 4 տոկոսը դարձավ 3,9893, ՔՊ-ն ԲՀԿ-ից գողացավ 60 հազար ձայն: Իսկ օրենքն ասում է, որ քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելուց հետո պարտադիր պետք է վերաքվեարկություն անցկացնել կամ նոր ընտրություններ նշանակել: Մենք զրուցել ենք ԿԸՀ նախկին անդամ, փաստաբան **Գեորգի Մարտիրոսյանի** հետ:

- Փաստորեն, 60 հազար քաղաքացու ձայնն անտեսվեց ԿԸՀ-ի կողմից: 3 ընտրատեղամասի արդյունքներն անվավեր ճանաչելով եւ վերաքվեարկություն չնշանակելով՝ Վահագն Հովակիմյանը ցույց տվեց, որ իր համար կարեւորը ոչ թե քաղաքացու ընտրական իրավունքն է, այլ Նիկոլ Փաշինյանի իշխանության վերարտադրությունը: Ի՞նչ կարծիք ունեք այս պրոցեսների մասին: Եթե օրենքն ասում է, որ նման դեպքերում պետք է վերաքվեարկություն անցկացնել, ինչո՞ւ դա չարվեց:

- Թեպետ ես ծանոթ չեմ փաստական հիմքերին, սակայն, իմ խորին համոզմամբ, այս որոշումը բավականին խնդրահարույց որոշում է: Գուցե հիմնավոր որոշում է, գուցե՝ ոչ հիմնավոր, սակայն ես խնդիր եմ տեսնում:

- Ի՞նչ խնդիր: Ի դեպ, երբ Դուք ԿԸՀ անդամ էիք, լինո՞ւմ էին նման իրավիճակներ եւ այնպիսի որոշումներ, երբ ԿԸՀ բոլոր անդամներն անխտիր իշխանության օգտին որոշում կայացնեին, եւ նրանցից գոնե մեկը չհակառակվեր:

- Երբ ես ԿԸՀ անդամ էի, միաձայն որոշումներ շատ էին լինում, բայց դա չի նշանակում, որ մենք ենթարկվում էինք տվյալ ժամանակահատվածի իշխանության թելադրանքներին ու քմահաճույքին: Ինձ համար, նորից կասեմ, ԿԸՀ-ի այս որոշումը խնդրահարույց է: Մնացյալ հարցերին լավ կլինի, որ հենց ԿԸՀ անդամները պատասխանեն, քանի որ այդ հարցերն իրենց խղճին են:

- Իշխանափոխությունից հետո դադարեցվեց Ձեր անդամակցությունը ԿԸՀ-ին: Ո՞րն էր պատճառը:

- Ժամկետն էր ավարտվել, պետք է ես դիմեի Ազգային ժողով, սակայն չունեի նման ցանկություն եւ որոշեցի վերադառնալ փաստաբանական աշխատանքին:

- Թե՞ իշխանությունները չցանկացան:

- Չէ, նրանց ցանկանալ կամ չցանկանալու հարցը չէր, ես պետք է դիմում ներկայացնեի ԱԺ, իսկ ես որոշեցի, որ չպետք է ներկայացնեմ: Հարցի մյուս կողմն է՝ կընտրեին ինձ, թե ոչ, բայց ես՝ ինքս, չունեի այլեւս նման ցանկություն:

- Քանի որ Դուք ծանոթ եք Ընտրական օրենսգրքին, կարո՞ղ եք ասել, թե ինչ մեխանիզմներ են գործում, եւ նման դեպքերում, երբ քվեարկության արդյունքներն անվավեր են ճանաչվում, ի՞նչ գործընթացներ պետք է հաջորդեն:

- Օրենքն ասում է, որ վերաքվեարկություն պետք է լինի, եթե անվավեր են ճանաչվում տեղամասերի արդյունքները, կլինի երեք ընտրատեղամաս, թե ավելի: Բայց քանի որ ես փաստական հանգամանքներին ծանոթ չեմ, չեմ կարող հստակ ասել:

- Նիկոլ Փաշինյանը պարբերաբար հայտարարում է, որ ընտրակաշառք է բաժանվել, մարդկանց շահագրգռել են եւ այլն: Փաստացի Փաշինյանը պնդում է, որ ընտրություններն ազնիվ ճանապարհով չեն ընթացել, այդ դեպքում ինչո՞ւ ընտրությունների արդյունքները ԿԸՀ-ն չի ճանաչում անվավեր:

- Երբ բարձրաձայնվում է ընտրակաշառքի մասին, ընտրության ողջ արդյունքները դրվում են կասկածի տակ, ու կապ չունի, թե այդ հայտարարությունները որ կողմից են ինչում: Անմեղության կանխավարկածի հարց կա՝ ընտրակաշառքի հետ կապված, դատարանի վճիռ է պետք, հարց է՝ կլինի՞ այն, թե՞ չի լինի կամ երբ կլինի: Ենթադրությունների վրա հիմնվել չի կարելի եւ չի կարելի ընտրությունների արդյունքները ենթադրությունների հիման վրա ճանաչել ոչ լեգիտիմ: Դատական ակտ է հարկավոր՝ ուժի մեջ մտած, որտեղ կնշվի, որ կոնկրետ ինչ-որ ուժեր ընտրակաշառք են բաժանել:

- Իսկ եթե նման վճիռ լինի մի քանի տարի անց, այսինքն՝ անիմաստ է դառնում պրոցեսը:

- Նման դեպք եղել է Գերմանիայում, բայց ոչ ընտրակաշառքի հետ կապված: Անգամ կուլտուրական գերմանացիները չգիտեին ինչ անել այդ վճռի հետ, ուր մնաց՝ մենք հասկանանք, թե ինչ ենք անելու: Գերմանիայում տեղի ունեցան ՏԻՄ ընտրություններ, սակայն երեք տարի անց պարզվեց, որ ընտրված համայնքի ղեկավարն իրավունք չուներ պաշտոնավարելու: Կուլտուրական Գերմանիան կրակն էր ընկել, չգիտեր ինչ անել, համայնքապետի որոշումները չգիտեին անգամ՝ իրավաչա՞փ համարել, թե՞ ոչ, Հայաստանի պարագայում բարդ է ասելը:

- Դուք նորմա՞լ եք համարում, որ ԿԸՀ նախագահը կուսակցական է, թեկուզ ոչ դե ֆակտո, սակայն դե յուրե, եւ ենթարկվում է Փաշինյանին:

- Օրենքն այլ բան է ասում: ԿԸՀ նախագահը պետք է լինի անաչառ եւ չհարի որեւէ կուսակցության:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՄ ՔԱՅԼԸ

ՍԱՀՄԱՆԱՊԱՀՆԵՐԸ ՉԵ՞Ն ՈՒԶՈՒՄ ԱՐԳԵԼԵԼ ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԵԼՔԸ ԵՐԿՐԻՑ

Փաստորեն, ընտրություններից առաջ մեզ համոզում էին, որ վարչապետն ու նրա կինը միմյանց հետ որեւէ իրավական, անգամ քաղաքացիական կապ չունեն, ինքը՝ Աննա Հակոբյանը, նախ հեռացավ կառավարական ամառանոցից, ապա վերադարձավ, մի քանի ամիս անհետացավ ասպարեզից, ընտրարշավին էլ ոչ մի տեղ չերեւաց, իսկ ընտրությունների օրը հանկարծ հայտնվեց, եւ արդեն ներկայանում են որպես մեկ ընտանիք, մեկ քաղաքական թիմ: Կառավարության տրամադրած միջոցներով էլ ամսվա վերջին նա մեկնում է ԱՄՆ՝ առաջին տիկնանց համաշխարհային գագաթնաժողովին մասնակցելու:

Այս պարագայում բնական հարց է առաջանում. եթե նախընտրական շրջանում էլ Աննա Հակոբյանը վարչապետի կինն էր, եւ նրա ղեկավարած «Իմ քայլը» հիմնադրամն իրականացրել է բազմաթիվ բարեգործական ծրագրեր ու նյութական աջակցություն տրամադրել հարյուրավոր անձանց ու ընտանիքների, ապա իրավապահ մարմիններն ինչո՞ւ չեն գնահատում այդ գործընթացների համապատասխանությունը ընտրական եւ քրեական օրենսդրության պահանջներին: Մասնավորապես՝ բարեգործություն կատարելու արգելքին, ընտրակաշառք բաժանելուն եւ խոստանալուն, որը քրեական պատիժ է ենթադրում: Օրինակ, «Ուժեղ Հայաստանից» կալանավորվել է հայտնի հետախույզ Արթուր Ավանեսյանը՝ Կանդազը, որն ընտրացուցակում չկար, կարծեմ՝ ընտրելու իրավունք էլ չուներ՝ արցախցի է: Նա իր խոսքում մեկին ասել էր. «Ուժեղ Հայաստանի»՝ իշխանության գալուց հետո «լավ կլինի»՝ «Չարչարվեցիք ընտրեցիք՝ համ գործն ա լնըմ, համ հողն ա լնըմ, համ տոնն ա լնըմ»: Այս արտահայտությունը քննչականը գնահատել է որպես ընտրակաշառքի խոստում եւ մարդուն կալանավորել:

Հատկապես հետաքրքիր է հակակոռուպցիոն կառույցների մեկնաբանությունը: Այն կառույցների, որոնք սովորաբար մեծ ակտիվություն են ցուցաբերում ընդդիմության նկատմամբ ցանկացած կասկածի դեպքում: Որեւէ ուսումնասիրություն եղո՞ւ է «Իմ քայլի» հետ կապված: Եթե ընտրություններից առաջ Փաշինյանն ու Աննա Հակոբյանը «կապ չունեին» փաստարկն էին օգտագործում, իսկ ընտրություններից հետո պարզվեց՝ «ընտանիք են», եւ Աննա Հակոբյանն էլ առաջին տիկինն է, ապա ակնհայտորեն օրենք է խախտվել: Օրենքը գործել է ընդդիմության նկատմամբ, իշխանությունն օրենքից դուրս է գործել:

Եթե նույն չափանիշները գործեին բոլորի համար, ապա Աննա Հակոբյանի՝ ԱՄՆ մեկնելու օրը ԱԱԾ-ն օդանավակայանից տեսանյութ պետք է տրամադրի որեւէ լրատվամիջոցի, որը կհրապարակվի նման մի վերնագրով. «Բարեգործության արգելքի հնարավոր խախտման գործով Աննա Հակոբյանը փորձել է փախչել երկրից»: Հետո՝ նրան պետք է տեղափոխեն ուղիղ մեկուսարան, գոնե արգելեն երկիրը լքելը: Իսկ իշխանական լրահոսը մեկ շաբաթ կքննարկի «դարի բացահայտումը»: Բայց, ինչպես միշտ, օրենքը մեզ մոտ «սիրում է» միայն ընդդիմությանը, եւ նման սցենարը բացառված է:

Որպեսզի պատկերացնեք, թե ինչքան անարգել է գործել «Իմ քայլը» հիմնադրամը նախընտրական փուլում, բավական է մտնեք հիմնադրամի էջը, որտեղ ամեն օր ինչ-որ հաղորդագրություն է դրվել՝ արված, արվելիք աշխատանքների, ծրագրերի, խոստումների մասին: Ասենք, հունիսի 5-ին «Նոր մեկնարկ» կրթաթոշակային ծրագրի մասին են հիշեցնում, որ դիմեք՝ առկա ուսուցման համար. մնացել է 7 օր, եւ խոստանում են վճարել ուսման վարձը: Հունիսի 4-ին հայտարարություն կա՝ 254 մասնակցի բիզնեսին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու հետ կապված, «Հաջողակից՝ սկսնակին» ծրագրի «Միմյանցից ոգեշնչված» նախագծի մասնակցության վերաբերյալ: Մայիսի 28-ին ԵՊՀ-ում հիմնադրամն ամառային դպրոցի դիմորդների հետ է հանդիպել եւ հարցազրույցներ անցկացրել. «35 հավակնոտ դիմորդներից ամառային դպրոցին մասնակցելու հնարավորություն ստացավ ուժեղագույն 25-ը»: Մայիսի 27-ից մինչեւ հունիսի 16-ը պատվիրակություն է ուղարկել Չինաստան՝ «Չինարեն լեզվի եւ մշակույթի» հատուկ մասնագիտական սեմինարին մասնակցելու: Մայիսի 17-ին «Գյուղական զբոսաշրջություն» (Գաստրոբակ) ծրագրի շրջանակում հիմնադրամի փոխտնօրեն Թալին Թոփալաքյանը, ծրագրի ղեկավար Ստելլա Սարուխանյանը եւ բիզնեսի փորձագետ Մհեր Դավոյանը մեկնել են Թալին՝ հանդիպելու երեք բնակավայրերից ընտրված 12 շահառու ընտանիքների հետ, որոնք «նպատակ ունեն սեփական տունն ու տնտեսությունը զբոսաշրջային գրավիչ ծառայության վերածել եւ զարգացնել»: Այս ծրագրի շրջանակում մասնագիտական դասընթացների է մասնակցել 43 ընտանիք, որի վերջնարդյունքում Ոսկեթաս, Դաշտադեմ եւ Գառնահովիտ բնակավայրերից կընտրվի մեկական հաղթող ընտանիք, որոնց կտրամադրվի ֆինանսական աջակցություն՝ սեփական տունն ու համայնքը զարգացնելու նպատակով:

Այս բոլորը պարզ եւ ակնհայտ ընտրակաշառք է, Ընտրական օրենսգրքի եւ բարեգործության արգելքի խախտումներ, որոնց վրա իրավապահ մարմիններն աչք են փակել: Իսկ դա փորձել են սղղացնել՝ ձեւացնելով, թե Աննա Հակոբյանը ոչ մի կապ չունի Նիկոլ Փաշինյանի եւ ՔՊ-ի հետ: Ընտրություններից հետո ընդամենը 5 օր անց էլ տիկին Հակոբյանը մեկնում է ԱՄՆ՝ որպես ՀՀ առաջին տիկին:

Արեգ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Իրենք են հարձակվել, բայց Հոխիկյանի դեմ են բողոքել

Ինչպես արդեն հայտնել ենք, մայիսի 31-ին, ժամը 13:00-ի սահմաններում ծեծկռտուք էր տեղի ունեցել ՔՊ-ականների եւ Նաիրի Հոխիկյանի միջեւ: Մեզ հետ զրույցում Նաիրի Հոխիկյանը նշել էր, որ միջադեպը տեղի է ունեցել Փարաքար համայնքի Նոյակերտ բնակավայրի իր տան բակում: Նա պատմել էր. «Գանգեցին ինձ, դուրս կանչեցին, գնացի, սկսեցին մեղադրանքներ, սեռական բնույթի հայհոյանքներ, հրմշտոց, դեպի մեքենան էին հրելով տանում, փորձում էին առեւանգել, սադրում էին, իրենց կողմից սկսվել է ծեծկռտուք, ես միայնակ էի, իրենք՝ 2 հոգով, մեկին էի ճանաչում՝ Գեւորգ Խաչատրյանն էր: Իրենք սպառնացել են, որ քանի որ ես իրենց քաղաքական ուժին քննադատում եմ, իրենք թույլ չեն տա, որ ես այստեղ ապրեմ, իմ հարցերը կլուծեն, գյուղից կվռնդեն: Որից հետո երբ ես ասել եմ, որ չսպառնան, չհայհոյեն, անցել են հարվածների: Բնականաբար, ես էլ եմ փորձել պաշտպանվել, հարվածել, բայց երբ հասկացել եմ, որ կյանքի համար վտանգավոր գործողությունների են անցնում, նկատել եմ, որ ձեռքն են տանում գրպանը, մեքենայից են ինչ-որ բան փորձում բերել, ես փոքր շարիկով ատրճանակով, կարելի է ասել՝ նույնիսկ խաղալիք, վերցրել եմ ձեռքս, ասել եմ՝ փախեք էստեղից»:

«Հրապարակ»-ի հետ զրույցում Նաիրի Հոխիկյանը նշեց, որ թեեւ դեպքից ավելի քան 2 շաբաթ է անցել, բայց ինքը գործով վկայի կարգավիճակ ունի, ոչ թե տուժողի: «Դեռեւս վկաների հարցաքննության փուլում է գործը: Որովհետեւ հարձակումից անմիջապես հետո հարձակվողները գնացել են ոստիկանություն եւ իմ դեմ հանցագործության մասին հաղորդում տվել: Այսինքն, իրենք են հարձակվել, բայց իմ դեմ են բողոքել: Դրա համար դեռեւս վկաների միջոցով փորձում են ճշմարտությունը գտնել»,- ասաց Հոխիկյանը:

ԿԱՅՔԸ ԴԵՌ ՉԻ ԱՇԽԱՏՈՒՄ, ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ՎԵՐՋԻՆ ՕՐԸ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կայքն արդեն երկու շաբաթ է՝ աշխատում է մասնակիորեն: Չի աշխատում ամենակարեւոր հատվածը՝ հնարավոր չէ մուտք գործել հայտարարագրերի ռեեստր, որտեղ հրապարակվում են պաշտոնյանների եւ նրանց հետ փոխկապակցված անձանց եկամուտների եւ անշարժ գույքի հայտարարագրերը: Բանն այն է, որ հունիսի 1-ին պաշտոնյաների եւ նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից հայտարարագրեր ներկայացնելու ժամկետն ավարտվել է: ԿԿՀ-ից մեր հարցին ի պատասխան հայտնեցին. «Մեր կայքը սպասարկող կազմակերպությունը կիբեռանվտանգության հետ կապված խնդիրներ է արձանագրել եւ պետք է միջոցառումներ իրականացնեին: Դրա հետ կապված՝ հրապարակային ռեեստրը ժամանակավորապես անհասանելի է, բայց հիմա էլ աշխատում են դրա վրա, որ հասանելիությունն արագ վերականգնվի»: Նկատենք, որ այդ «արագ»-ը 2 շաբաթից ավելի է:

Հարցին, թե արդյոք Նիկոլ Փաշինյանի կինը՝ Աննա Հակոբյանը, դուստրերը՝ Մարիամ եւ Շուշան Փաշինյանները, որդին՝ Աշոտ Փաշինյանը, հայտարարագիր ներկայացրե՞լ են՝ ԿԿՀ-ից պատասխանեցին. «Աննա Հակոբյանը, Շուշան եւ Մարիամ Փաշինյանները հայտարարագրերը ներկայացրել են վերջին օրը՝ մայիսի 31-ին, իսկ Աշոտ Փաշինյանը հայտարարագիր չի ներկայացրել եւ պարտավորվածություն էլ չունի հայտարարագիր ներկայացնելու, քանի որ չի հանդիսանում պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող անձ»:

Նշենք, որ Աշոտ Փաշինյանը վերջին անգամ հայտարարագիր ներկայացրել է 2022 թվականին: Իսկ Շուշան Փաշինյանն ամիսներ առաջ էր տեղեկացրել, որ բնակվում է առանձին: Փետրվարին ամուսնալուծության կամ քաղաքացիական ամուսնությունը դադարեցնելու եւ առանձին ապրելու մասին հայտնեց նաեւ Աննա Հակոբյանը, սակայն մեկ ամսից վերադարձավ կառավարական ամառանոց եւ այժմ վարչապետի կնոջ կարգավիճակում գործուղվում է ԱՄՆ:

Ավելի վաղ «Հրապարակ»-ը գրավոր հարցում էր ուղարկել ԿԿՀ՝ պարզելու, թե որ պաշտոնյաները հայտարարագրեր չեն ներկայացրել: ԿԿՀ-ից հայտնել էին, որ 67 պաշտոնատար անձ եւ տարբեր կուսակցությունների 164 ներկայացուցիչ տարեկան հայտարարագիր չեն ներկայացրել: Հայտարարագիր չեն ներկայացրել ՔՊ-ական պատգամավորներ Վահագն Ալեքսանյանը եւ Մերի Գալստյանը, Դիլիջանի համայնքապետ Դավիթ Սարգսյանը: ԿԿՀ-ն գրավոր ծանուցագրեր է ուղարկել հայտարարագիր չներկայացրած բոլոր հայտարարատուներին, այդ թվում՝ պաշտոնյաների ընտանիքի անդամներին: Եթե վերջիններս մինչեւ հունիսի 31-ը հայտարարագիր չներկայացնեն, ապա սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով կտուգանվեն:

Նյութերը՝ Արմինե ՆԱՎՈՅԱՆԻ

ԿՈՂԻՆ

ԻՐԱՆԸ ԽԻԶԱԽՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐ Է ՏԱԼԻՍ

Իրանի երկու խոշորագույն քաղաքներում՝ մայրաքաղաք Թեհրանում եւ Իսֆահանում, ինչպես նաեւ ավելի փոքր քաղաքներում վերջին մի քանի օրերին տեղի են ունենում բազմահազարանոց ցույցեր՝ ընդդեմ ԱՄՆ-ի հետ հնարավոր խաղաղության համաձայնագրի ստորագրման: Բողոքի ցույցերը տեղի են ունենում այն տեղեկությունների ֆոնին, որ հունիսի 19-ին ԱՄՆ-ն ու Իրանը կարող են խաղաղության համաձայնագիր ստորագրել: Իրանցիները կարծում են, որ այդ համաձայնագիրն ազգային շահերի ոտնահարում է եւ պատերազմում զոհվածների հիշատակի անարգում: Ցուցարարների հիմնական կարգախոսներն են՝«Մահ Արաղչիին՝ անպատիվ կոմպրոմիսիստին», «Արաղչի, ամոթ ունեցիր, դադարիր զիջել Ամերիկային», «Ղալիբաֆ, Արաղչի, հրաժարական տվեք, հրաժարական տվեք»: Խոսքն ԱՄՆ-ի հետ իրանական կողմի երկու հիմնական բանակցողների մասին է՝ ԱԳ նախարար Աբաս Արաղչիի եւ խորհրդարանի Միլի մեջլիսի նախագահ Մոհամադ Բաղեր Ղալիբաֆի, որոնց իրանցի ցուցարարները մեղադրում են հասարակությունից գաղտնի ԱՄՆ-ին անհարկի զիջումներ անելու, ամերիկյան պահանջներն ընդունելու եւ երկիրը կապիտուլյացիայի ենթարկելու մեջ:

Իրանը տասնյակ տարիներ գտնվում է տնտեսական շրջափակման եւ պատժամիջոցների տակ, արդեն մեկ տարի շարունակ պատերազմի մեջ է ԱՄՆ-ի եւ Իսրայելի հետ, ամերիկյան եւ իսրայելական ինքնաթիռները եւ հրթիռները ռմբակոծում են իրանական քաղաքները, բնակավայրերը, զոհերի թիվը մի քանի հազար է, վիրավորներինը՝ տասնյակ հազարներ, միայն փետրվարի 28-ին իրանական դպրոցներից մեկի վրա ամերիկյան հարձակման արդյունքում զոհվեց 155 մարդ, որոնց մեծ մասը դպրոցականներ էին: Իրանում հարյուր հազարավոր մարդիկ փախստական են դարձել, մի մասը կորցրել է տունն ու աշխատանքը: Բայց նույնիսկ այդ պայմաններում մարդիկ չեն հրաժարվում իրենց արժանապատվությունից, չեն ցանկանում նվաստացուցիչ խաղաղություն, ընդհակառակը՝ դավաճանության մեջ են մեղադրում նրանց, ովքեր ուզում են խաղաղություն բերել: Մարդիկ արժանապատվությունը գերադասում են ամերիկյան պահանջները կատարելու պարտադրանքից:

Ինչո՞ւ նույնը տեղի չունեցավ Հայաստանում, երբ Նիկոլ Փաշինյանն Ադրբեջանի հետ կապիտուլյացիա ստորագրեց կամ երբ հրաժարվեց Հայաստանի տարածքը պաշտպանելուց, երբ ճանաչեց Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, երբ համաձայնեց Հայաստանի ինքնիշխանությունը զիջել ԱՄՆ-ին եւ թույլ տալ, որ Հայաստանի տարածքի մի մասը կոչվի ԱՄՆ նախագահի անունով, այդ տարածքն անվանական մնա Հայաստանի կազմում, բայց փաստացի դուրս լինի Հայաստանի վերահսկողությունից, եւ դա ներկայացնի որպես փառահեղ ձեռքբերում: Երբ Փաշինյանը սկսեց հասարակությանը վախեցնել պատերազմով եւ այդ խուճապի պայմաններում բռնազավթել իշխանությունը, ինչո՞ւ որեւէ մեկը փողոց դուրս չեկավ եւ չպահանջեց չզիջել Հայաստանի ինքնիշխանությունը: Արդյո՞ք հայերն ավելի ստրկամիտ են, իսկ իրանցիները՝ արժանապատիվ: Գուցե նաեւ եւ հենց այդ պատճառով է, որ իրանցիները հազարամյակներ շարունակ պետություն են ունեցել, իսկ հայերս պետություն ենք ունեցել միայն հանգամանքների բերումով, շատ դեպքերում՝ մեզնից անկախ, անկախ մեր կամքից՝ այդպես էլ չգիտակցելով սեփական պետություն ունենալու արժեքը:

Իրանցիների կամ իրանական հասարակության մի մեծ հատվածի համար կան արժեքներ, որոնք ավելի կարեւոր են կյանքից, ֆիզիկական գոյությունից, դրա համար նրանք պատրաստ են հրաժարվել կյանքից, բայց ո՛չ այդ արժեքներից: Մեր աչքի առաջ Իրանի իշխանության բազմաթիվ ներկայացուցիչներ՝ Ղասեմ Սուլեյմանիից մինչեւ հոգեւոր առաջնորդ Ալի Խամենեի, իրենց կյանքը չխնայեցին հանուն սեփական երկրի եւ դրա անկախ գոյության: Պատկերացնո՞ւմ եք որեւէ իրանցի առաջնորդի, որը քարոզարշավի ամբողջ ընթացքում ծամեր, զբաղված լիներ ուտելով եւ դա ներկայացներ որպես կյանքի ու ապրելու միակ նպատակ, իմաստ, մեծագույն հաճույք ու ձեռքբերում: Նման բան երբեք չի լինի, որովհետեւ դա կլինի անարգանք սեփական անձի եւ սեփական երկրի նկատմամբ: Բայց հայ հասարակության մի մասը գնաց եւ ընտրեց մեկին, որը քարոզում էր, որ աշխարհի ամենակարեւոր բանը ծամելն է, կուշտ լինելը, որ դա է մարդու միակ նպատակը եւ ապրելու իմաստը:

Երբ Փաշինյանը խոսում է Արցախից վերջնականապես ազատվելու մասին, նրան ծափ տվողներ ու ողջունողներ կան, իսկ երբ Իրանի իշխանության որոշ ներկայացուցիչներ համաձայնում են հրաժարվել միջուկային ծրագրից, իրանցիները համարում են երկրի շահերի եւ ինքնիշխանության զիջում՝ պահանջելով նման պաշտոնյաների հրաժարականն ու մահը: Իրանն աշխարհի ամենամեծ երկիրը չէ, ոչ էլ տեխնոլոգիապես կամ տնտեսապես զարգացածը, նույնիսկ ամենամեծ բանակը չունի, բայց ունի խիզախ առաջնորդներ եւ հասարակություն եւ դրա համար կարողանում է կռվել ու իր պահանջները պարտադրել գերտերություն համարվող ԱՄՆ-ին, որի առաջ խոնարհվում են անհամեմատ ավելի մեծ, զարգացած ու հարուստ երկրներ: Դրա համար է, որ Իրանի ու իրանցի ժողովրդի սխրանքով ոգեշնչվում են աշխարհի միլիոնավոր ազատատենչ մարդիկ, իսկ հպատակներն ու ստրուկներն ատելություն են տածում, որովհետեւ կարծում են, որ իրենց տիրոջ դեմ ըմբոստությունն աններելի մեղք է, ու նման մեղք գործողն անպայման պետք է պատժվի, այլապես հնազանդ ստրուկներն իրենց այնքան էլ լավ չեն զգա:

Մեր միակ սփոփանքը մնում է այն, որ Հայաստանը եւս ունեցել է հերոս առաջնորդներ եւ հերոս քաղաքացիներ, ովքեր հանուն պետական շահի գնացել են ինքնազոհաբերման, ինչպես, օրինակ, Վազգեն Սարգսյանը եւ Կարեն Դեմիրճյանը, որն իր ընտանիքի անդամներին զգուշացրել էր, որ իրեն կարող են սպանել, եւ, միեւնույն է՝ չէր հրաժարվել իր ընտրած ուղուց: Սփոփանքն այն է, որ Նիկոլ Փաշինյանը եւ նրա հավաքած ծամողների թիմը բացառություն են եւ ոչ թե օրինաչափություն:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ՍՄԲԱՏՅԱՆԸ ՍՏՈՒՄ ԷՐ

Մայիսի 10-ին ԿԸՀ քարտուղար Արմեն Սմբատյանը տեսանյութ էր նկարել այն մասին, թե ինչպես են բաշխվում մադատները, եւ փորձել էր մանիպուլացնել, թե քվեների փոշիացում չի լինում: «Նախ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արդյունքները վերջնական ամփոփելուց հետո հաշվում է, թե որ ուժը քանի տոկոս ձայն է ստացել, ընդ որում՝ տոկոսը հաշվելիս հաշվի են առնվում բոլոր կողմ քվեարկած քվեաթերթիկները եւ անճշտությունների չափը: Անվավեր քվեաթերթիկները հաշվի չեն առնվում: Այն կուսակցությունը, որը ստացել է 4 տոկոս եւ ավելի, մինչեւ 3 կուսակցություն ընդգրկող դաշինքը, եթե ստացել է 8 եւ ավել տոկոս, եւ 4 եւ ավել կուսակցություն ընդգրկող դաշինքը, եթե ստացել է 10 եւ ավել տոկոս ձայն, նրանք համարվում են արգելապատնեշը հաղթահարած եւ մասնակցում են մանդատների բաշխմանը: Մանդատների բաշխման համար արդեն հիմք ենք ընդունում նրանց կողմ ստացած ձայները, ոչ թե ամբողջի կողմ ստացած ձայները: Եվ 101 նվազագույն մանդատը բաշխվում է այս կուսակցությունների եւ դաշինքների միջեւ, հիմք ընդունելով նրանց ստացած կողմ ձայները՝ որպես հարյուր տոկոս... Այս բանաձեւի թյուրըմբռնման պատճառով կա այսպիսի միֆ, որ մնացած ձայները, մնացած կուսակցությունների ձայները, որոնք որ չեն հաղթահարում արգելապատնեշը, բաժանվում է արգելապատնեշը հաղթահարածների միջեւ: Չկա նման բան, եւ այդ՝ «փոշիացվում է» տերմինը պետք է ուղղակի դուրս հանենք մեր մտածողությունից, որպեսզի դա մեզ չդեմոտիվացնի՝ գնալու քվեարկության: Ոչ մի ձայն, արգելապատնեշը չհաղթահարած կուսակցությունների ոչ մի ձայն չի տրվում մեկ ուրիշին: Ավելին, կարող է լինել սցենար, երբ արգելապատնեշը չհաղթահարած կուսակցությունները կամ դաշինքները եւս ստանան մանդատներ»,- նշել էր նա, որից հետո շատերը սկսեցին օգտագործել նրա խոսքը՝ ասելով. տեսա՞ք, որ փոշիացում չկա:

Սակայն դեռ այդ ժամանակ պարզ էր, որ Սմբատյանն ուղղակի ստել է, այն ուժերը, որոնք չեն հավաքել 4 տոկոս ձայն եւ չեն անցել խորհրդարան, փոշիացրել են ընտրողների ձայները, ինչը բացառապես ՔՊ-ի օգտին է: Նախկին պատգամավոր Նաիրա Զոհրաբյանը, մեզ հետ զրույցում խոսելով Սմբատյանի այդ կեղծ հայտարարության մասին, ասաց. «Ակնհայտ է, որ եթե քաղաքական ուժը չի հաղթահարում անցողիկ շեմը, կուսակցությունների համար՝ 4 տոկոսը, իսկ դաշինքի համար՝ 8 տոկոսը, ապա ձայները փոշիացվում են եւ, ըստ հարաբերակցության, բաժանվում են շեմը հաղթահարած կուսակցությունների միջեւ, իսկ ամենաշատ փոշիացված ձայները գնում են առաջին տեղը զբաղեցրած քաղաքական ուժին, տվյալ պարագայում՝ ՔՊ-ին: Մենք այժմ ունենք կատաստրոֆիկ իրավիճակ, նախ՝ անվավեր քվեաթերթիկների թիվն է շատ մեծ՝ 17 հազար: Ուզում եմ հիշեցնել, որ 2018-ին անվավեր քվեաթերթիկների թիվը 4 հազար 500-ի սահմաններում էր, 2021-ին՝ 4 հազար 906, իսկ հիմա՝ 17 հազար: 230 հազար ձայն էլ այս ամենի ֆոնին փոշիացվեց: Սա աննախադեպ թիվ է, եւ դրա արդյունքում ՔՊ-ն 2-3 պատգամավորական մանդատ ավել է ունենալու: Ես կարծում եմ, որ Ընտրական օրենսգրքում այնպիսի կարգավորումներ են պետք, որոնք փոշիացված ձայների խնդիրը կկարգավորեն: Եթե ինչ-որ քաղաքացիներ, որոնց թիվը փոքր չէ, իրենց ձայնը տվել են այն ուժերին, որոնք չեն հաղթահարել անցողիկ շեմը, դա չի նշանակում, որ այդ ձայները պետք է գնան այն կուսակցությանը, որին տվյալ ընտրողները դեմ են եղել, դա մեծ անարդարություն է: Ստացվում է, որ քաղաքացին չպետք է իր քաղաքական նախասիրություններով առաջնորդվի, հակառակ պարագայում իր քվեն կարող է գնալ իր համար ծայրահեղ անընդունելի ուժի օգտին: Ես չգիտեմ, թե ինչպես է այս խորհրդարանը ձեւավորվելու, եւ ինչպես է ընդդիմությունը նման տոքսիկ մթնոլորտում աշխատելու, արդեն իսկ ՔՊ-ականները սպառնում են, ձեռքերը շփելով հայտարարում, որ անհամբեր սպասում են ընդդիմությանը: Ընդդիմությունը, վստահաբար, վերցնելու է իր մանդատները, բայց ռացիոնալ քննարկում չի կարող այնտեղ լինել: 540 հազար քաղաքացիները, ի վերջո, ընդդիմությանը քվե չէին տվել՝ խորհրդարանում ինչ-որ հարցեր քննարկելու համար: Ինչ վերաբերում է Արմեն Սմբատյանի հայտարարությանը, ապա դա արվեց այն բանի համար, որպեսզի մարդիկ քվեարկեն այն ուժերի օգտին, որոնք ակնհայտորեն չեն հաղթահարելու անցողիկ շեմը, եւ նրանց քվեն գնալու է իշխանությանը: Իշխանությանը հենց այդ բոնուսը շնորհեց մի քանի մանդատ: Այդ հայտարարությունը տարակուսելի էր ինձ համար, ակնհայտ էր, որ ձայներ փոշիանալու էին, դրա նպատակը Նիկոլի օգտին ձայներ բերելն էր: Հենց սկզբից էլ երեւում էր, որ կան ուժեր, ովքեր եթե թռնեին պատալոկ, իջնեին ցած՝ անցողիկ շեմը չէին հաղթահարելու»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՄՈԹ ԵՆՔ ԱՊՐՈՒՄ ԴՐՍԻ ՀԱՅԵՐՈՎ, ՈՐ ՆՄԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ ՈՒՆԵՆՔ

*«Հրապարակը» խորհրդարանական ընտրությունների արդյունքների մասին զրուցել է վրացահայ գործիչ **Գուրգեն Մխիթարյանի** հետ:*

- Ընտրության արդյունքները դեռ ամփոփված չէին, սակայն Վրաստանի վարչապետ Կոբախիձեն շտապեց շնորհավորել Փաշինյանին՝ հաղթանակի առթիվ: Ինչո՞վ եք պայմանավորում նրա շտապողականությունը:

- Ես Կոբախիձեի շտապողականության պատճառը չեմ կարող հստակ իմանալ, բայց դա շատ վարկաբեկիչ շնորհավորանք էր: Դա վարկաբեկեց հենց այն երկրներին, որոնք բացեիբաց սատարում էին Նիկոլ Փաշինյանին՝ ընտրությունների ժամանակ:

- Ինչո՞ւ էր վարկաբեկիչ:

- Վրաստանը փորձեց եվրոպական երկրներից առաջ ընկնել իր շնորհավորանքով: Դա խոսում է այն մասին, որ Հայաստանում կատարվող ընտրությունները շատ մեծ դերակատարում ունեին եւ ունեն տարածաշրջանի համար: Ես չգիտեմ՝ Իրանը շնորհավորել է, թե՝ ոչ, բայց եթե շնորհավորեր Իրանը, ես դարձյալ չէի զարմանա, որովհետեւ այս ընտրությունները շատ մեծ դեր են տանում եւ փորձում են կողքից սիրաշահել Հայաստանի ապագա կառավարությանը: Դա սիրաշահում էր, ուրիշ ոչինչ, կամ էլ անտեղյակություն, կամ ժամանակից շուտ սխալ տվյալներ են ստացել: Չէ՞ որ մինչեւ ընտրությունների արդյունքների հաշվարկը Փաշինյանը հայտարարեց, որ իրենք հաղթել են եւ միանձնյա կարող են ձեւավորել կառավարություն: Այդ հայտարարությունից հետո պարզ դարձավ, որ իրենք խախտումներով են հաղթանակը տանում, եւ մենք էլ ենք այստեղ տեսնում՝ ընտրություններից առաջ այդքան կալանավորումներ, ահաբեկիչ արտահայտություններ՝ կզացնելու եմ, նստացնելու եմ, եսիմինչ եմ անելու, սպանելու եմ... Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ ոչ թե քաղաքական գործիչ է խոսում, այլ ինչոր փողոցային տականք: Հայաստանից դուրս ապրող հայերի համար սա մի քիչ ամոթ է՝ Հայաստանում նման տեսքով վարչապետ ունենալը: Ճիշտ է, ինքը մեր վարչապետը չէ, մեր ընտրությունը չէ, բայց որպես ազգի ներկայացուցիչ, մեզ համար ամոթ է: Կոնկրետ ինձ համար ամոթ է տեսնել, որ քո երկրի ապագա ղեկավարը փողոցային ժարգոնով է խոսում: Չնայած զարմանալի չէ, հայոց ոսկեղենիկ լեզվի մեջ այնպիսի կեղտոտ խոսքեր մտցվեցին այդ ազգակործան հեղափոխությունից հետո, որ արդեն ոչ մի բան զարմանալու չէ՝ դուխով, դոմփել, պեռաշկի ուտել, եգիպտացորեն կրծել ու այլ խայտառակ բաներ: Մարդիկ կան, որոնց հենց այդպիսի բաներն են մոտ, ու հենց այդ էլեկտորատի վրա էլ կատարել են ՔՊ-ի հաշվարկը:

- Վրաստանում հետաքրքրվածէին ՀՀ խորհրդարանական ընտրություններով, եւ արդյոք Վրաստանի սպասումներն արդարացել են:

- Չեմ կարծում, որ Վրաստանի սպասումներն արդարացել են այս ընտրություններով, քանի որ Վրաստանը եւ Հայաստանը միջանցք էին դառնալու Հյուսիս-հարավ ճանապարհի համար, որով ռուսական շուկան կապվելու էր Իրանի հետ, հետո՝ Պարսից ծոց, այնտեղից՝ արդեն Հնդկական օվկիանոս, Աֆրիկա եւ այլն: Դա օգուտ էր նաեւ Հայաստանին, չեմ կարծում, թե Վրաստանում տրամադրություններն այդքան վառ լինեն, բացի այն լիբերալ կուսակցություններից, որոնք առաջ միտինգներ էին անում՝ միասեռականները եւ այլն, իհարկե, տոնում են Փաշինյանի հաղթանակը: Դե, դա իրենց գործն է, չեմ ուզում մեկնաբանել նրանց արարքները: Բայց կան խելքը գլխին, կարդացած մարդիկ, որոնք շատ բացասական վերաբերմունք են ցույց տալիս, քանի որ Փաշինյանի հաղթանակով պարզ դարձավ, որ այդ 49 տոկոսը, սա իմ կարծիքն եմ ասում, անինքնասեր, անարժանապատիվ մարդիկ են, այսպես ասած՝ դուխով ապուշներ են: Վախենում եմ նույնիսկ այդ մասին մտածել, բայց այս ընտրությունները ցույց տվեցին, որ Հայաստանը կանգնած է հերթական բաժանման շեմին:

- Ինչ բաժանման:

- Առաջին բաժանումը մեր թվարկության 381 թվականին էր, երկրորդը՝ 576 թվականին, հիմա էլ երրորդը կլինի, որ կբաժանեն Ռուսահայաստանի եւ Թուրքահայաստանի:

- Վրացական լրատվամիջոցներն ինչպե՞ս են լուսաբանել ընտրությունները ՀՀ-ում:

- Վրաստանի լրատվամիջոցները լուսաբանել են որպես կոպիտ խախտումներով եւ բռնաճնշումներով կատարված ընտրություններ: Որոշ լրատվամիջոցներ այդ ընտրախախտումները Շեւարդնաձեի ժամանակների հետ են համեմատում, ասում են, որ նույնիսկ Շեւարդնաձեի ժամանակ այդպիսի խախտումներ եւ այդպիսի բռնաճնշումներ չեն եղել այստեղ: Բայց ամենացավալին այն է, որ Եվրոպան դա ճանաչեց եւ շնորհավորեց: Սակայն լավ կողմ էլ կա, թող վերջապես հայ ժողովուրդը ճանաչի Եվրոպային, ու թե ինչ է եվրոպական արժեհամակարգը: Տիգրան Խզմալյանից թող պատասխան պահանջեն, մ՚այս էր եվրոպական արժեհամակարգը, նույն Լեւոն Շիրինյանից կարելի է պատասխան պահանջել, երբ որ բռնաճնշելով, ընտրություններից մեկ օր առաջ, երկու օր առաջ թեկնածուներին նստացնում են, կալանավորում են, ինչի՞ մասին է խոսքը: Սակայն սփոփանք կա, որ այն քաղաքական ուժերը, որոնք պարտվել են, փոքրամասնություն են, իսկ փոքրամասնություն լինելը պատիվ է: Փոքրամասնություն եղել են Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթեւը, Կիլիկյան մեր թագավորները, Արշակունյաց թագավորները, նրանք փոքրամասնություն են եղել եւ կարողացել են մեծամասնություն կոչված աղբակույտը կառավարել: Ես ուղղակի զարմանում եմ՝ ո՞ւր են Հայաստանի մտավորականները, ակադեմիկոսները, ասելու ոչինչ չունե՞ն: Չէ՞ որ այդ ակադեմիկոսներից մեկն է անձամբ խնդրել Սերժ Սարգսյանին՝ ազատել Նիկոլ Փաշինյանին՝ 2018-ին են խնդրել, խնդրողն է ինձ անձամբ ասել: Աննա Հակոբյանը լացակումած գնացել է մոտը, խնդրել է, որ օգնեն, ինքն էլ, 14 ակադեմիկոսների ստորագրություններ հավաքած, գնացել է Սերժի մոտ, խնդրել է, որ ազատեն: Դա այդպես է եղել: Հիմա թող լոլո չերգեն, ազգի կործանման մեջ բոլորն էլ ունեն իրենց մեղքի բաժինը: Խորհուրդ եմ տալիս սփյուռքի հայերին՝ հրաժարվել Հայաստանի կառավարության ցանկացած ներկայացուցչությունից իրենց երկրներում, հավաքագրել իրենց ներքին ռեսուրսները եւ անել միայն ու միայն ազգապահպանական աշխատանք՝ իրենց պետությունների սահմանադրության սահմաններում:

Հայկ ԱԼՈՅԱՆ

ՎԵՐՋԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽԱՌՆԵԼ ԵՆ ԱԼԻԵՎԻ ՈՒ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԾՐԱԳՐԵՐԸ

«Հրապարակի» զրուցակիցը պատմական գիտությունների թեկնածու, ադրբեջանագետ **Տաթեւիկ Հայրապետյանն** է:

- Մի քանի օր առաջ Ադրբեջանի նախագահի օգնական Հիքմեթ Հաջիեւը Հայաստանում էր՝ Դիլիջանում հանդիպում ունեցավ ԱԽՔ Արմեն Գրիգորյանի հետ, անգամ զբոսնեցին քաղաքում: Տպավորություն է, որ կողմերը փորձում են ջերմ հարաբերությունների իմիտացիա ստեղծել: Ի վերջո՝ ինչի՞ մասին էր այդ հանդիպումը:

- Դժվար է այս հարցին պատասխանել, քանի որ որեւէ ստույգ տեղեկատվություն չկա: Իհարկե, ուշագրավ է, որ ընտրություններից անմիջապես հետո արագ կազմակերպվում է այս հանդիպումը: Դատելով ընտրություններից առաջ եւ հետո ադրբեջանական մամուլում ծավալվող քննարկումներից՝ կարող եմ ասել, որ իրենք իրենց առաջ խնդիր են դրել՝ ամեն գնով Հայաստանում հասնել Սահմանադրության փոփոխության: Ասեմ, որ սա զուտ քաղաքական կամ իրավական հարց չէ. Ալիեւն այս քայլով ուղղակի ուզում է ոչնչացնել մեզ բարոյական եւ հոգեբանական դաշտում, նա ցանկանում է ասել, որ ինքն է որոշելու, թե Հայաստանն ինչ սահմանադրություն ունենա, որ իր պահանջով Հայաստանում կկազմակերպվի հանրաքվե: Ի՞նչ ինքնիշխանության մասին կարող է խոսք գնալ՝ նման հանրաքվեի անցկացման դեպքում: Նաեւ հավելեմ, որ ընտրություններին քաղաքացիների ակտիվ մասնակցությունը որոշակիորեն խափանում է այս պլանները: Փաշինյանը թեեւ մնաց իշխանության, բայց չի հավաքել սահմանադրական մեծամասնություն, իսկ դա էականորեն բարդացնում է Ալիեւի հանրաքվե կազմակերպելու հարցը:

- Ըստ Ձեզ՝ ի՞նչ հարցեր կարող են քննարկել կողմերը, եթե գործնականում չկա որեւէ տեղաշարժ, իսկ հայ ռազմագերիների հարցը, առհասարակ, խիստ անորոշ է:

- Չկա իրական երկխոսության կամ իրական խաղաղության գործընթաց, դրա համար էլ չկա հայ գերիների հարցում որեւէ փոփոխություն: Կա Ադրբեջանի ղեկավարության կողմից հայկական ղեկավարությանը ներկայացվող պահանջների ցուցակ, որը Փաշինյանը փորձում է հերթով, կարգով անել: Ես բազմաթիվ առիթներով եւ հստակ փաստերով ցույց եմ տվել, որ ՀՀ ներկայիս ղեկավարությունն առաջնորդվում է Բաքվից թելադրվող օրակարգերով: Իշխանությունների գլխավոր թիրախներն այս պահին հայկական պետության՝ բանակի, եկեղեցու, մշակույթի դեմ են, բոլորը կապ ունեն գաղափարի, անվտանգության եւ ինքնության հետ: Ալիեւը մեզ գաղափարական դաշտում ոչնչացնելու նպատակ է դրել, Փաշինյանն էլ ծառայեցվում է հենց այդ նպատակի իրագործմանը: Բայց վերջին ընտրությունները որոշակիորեն խառնում են այդ ծրագրերը, Փաշինյանը հասկացավ, որ ինքը չունի մեծամասնություն, այլ բան, որ առկա համակարգն օգնեց իրեն՝ վերարտադրվել:

- Այս հանդիպմամբ իշխանություններն ի՞նչ են ցանկանում ցույց տալ հանրությանը:

- Իրենք հանրությանը ցույց տալու ոչինչ չունեն, հանրության մեծամասնությունը չի հավատում խաղաղության կեղծ թեզին, ընտրությունները դա փաստեցին, ընդ որում՝ նրանք փորձում էին խաղաղության կեղծ թեզին զուգահեռ ակտիվ շրջանառել պատերազմի սպառնալիքը: Սրանք անհամատեղելի են. հենց միայն պատերազմի սպառնալիքի մասին իրենց թեզն արդեն չեզոքացնում է խաղաղության մասին զրույցը: Ի վերջո, թող այն պարզ հարցին պատասխանեն, թե ինչպես է, որ Բաքվում շարունակում են պահել հայ գերիներին, ու ինչու է Ադրբեջանը պետական մակարդակով շարունակում Հայաստանի դեմ զավթողական ծրագրեր մշակել՝ քարոզվող ատելության եւ հայատյացության հետ միասին: Այս տրամաբանական հարցադրումներին իրենք որեւէ պատասխան չունեն:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ֆիլմ՝ սպորտի եւ բարոյական ընտրության մասին

Վիկտոր Տրունովը եւ Միխայիլ Սումարոկովը ժամանակին հայտնի բռնցքամարտիկներ են եղել, տարիներ անց դարձել են մարզիչներ: Սումարոկովը փորձել է աճող սերնդի մեջ սպորտի հանդեպ սեր սերմանել՝ մարզելով հասարակական հիմունքներով, սիրողական կերպով: Սումարոկովը երկու աշակերտ է ունենում՝ Միտյան ու Իգորը: Երկուսն էլ խոստումնալից: Ու երկուսն էլ սիրում են Տանյային: Եթե Իգորի համար ամեն բան չափված-ձեւված է ու նախապես պլանավորված՝ սպորտում չեմպիոնության հասնելուց մինչեւ ամուսնություն ու ընտանիք ստեղծելը, Միտյան սպորտը սիրում է անշահախնդիր: Մի անգամ Տրունովը տղաներին խնդրում է, որ հանդես գան իր թիմի կազմում: Իգորը մերժում է՝ հասկացնելով, որ հանդես կգա, եթե իրեն դարձնեն թիմի լիարժեք անդամ, թեեւ Սումարոկովն էր նրա մարզիչը: Միտյան համաձայնում է: Հետո հասկանում է կատարած սխալը: Սկսում է ամաչել կատարածի համար ..... Սակայն մարզիչը լայնախոհություն է ցուցաբերում, պարզում ամեն բան ու տղային հետ վերադարձնում մարզումների: Մոտավորապես սա է խորհրդային ուշ շրջանի «Ակնհայտ առավելությամբ» կինոնկարի սյուժեն: Սովետական ուշ շրջանի կինոն հաճախ է սպորտի թեմային անդրադարձել: Ընդ որում, սպորտը խորհրդային կինոմեկնաբանությամբ, ավելի շատ հոգեբանական ասպեկտով էր ներկայացվում: Կինոնկարը նկարահանվել է Մաքսիմ Գորկու անվան ստուդիայում: Ռեժիսորն է Վլադիմիր Սարուխանովը: Պրեմիերան կայացել է 87 թ. մարտի 23-ին, արտադրվել 86 -ին: ԽՍՀՄ-ում 2,9 միլիոն դիտում է ունեցել: Հիմքում խոր մարդկային հարաբերություններն են, մարզիչ-մարզիկ շփումները, մրցակցությունը, մարզչական փիլիսոփայությունը եւ, ի վերջո՝ սպորտին հատուկ դիմակայությունը: Ինչ խոսք, բարձրացված է նաեւ բարոյական արժեքների եւ բարոյական ընտրության թեման, սպորտի միջոցով անհատի կերտման եւ անձի դաստիարակության հարցը: Ֆիլմն այսօր էլ՝ չորս տասնամյակի հեռվից, շարունակում է նայվել ու պահպանել իր դաստիարակչական կրթիչ ֆունկցիան, մի բան, որ հատուկ էր սովետական կինոյին:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ո՞ՒՐ ԿՈՐԱՎ ԱՎԵԼԻ ՔԱՆ 4 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐԸ

ՏԱՎՈՒՇ

Տավուշի մարզպետարանի կազմավորման օրից ցայսօր հետեւում եմ մարզպետարանի գործունեությանը: 1990-ական թվականներին պետական շատ հիմնարկներ կազմավորված չէին, Հայաստանի 37 վարչական շրջանները լուծարված էին, մարզպետարաններն ավելի մեծ գործառույթներ ունեին: Հիմա գործում են խոշոր համայնքները, առկա են կապի արդիական միջոցներ, կառավարության տարածքային ստորաբաժանում մարզպետարանների գործառնական նշանակությունն էականորեն նվազել է: Վերջին տարիներին Տավուշի մարզպետարանում մի քանի աննշան փոփոխություն է կատարվել: Մարզպետարանն այլեւս կոչվում է մարզպետի աշխատակազմ:

Մարզպետարանի շենքի մուտքում ուղեփակոց է տեղադրվել, մարզպետի աշխատակազմի աշխատողը շենք մտնողին հարցնում է, թե ում մոտ է գնում, ստանալով աշխատակազմի պաշտոնյայի համաձայնությունը՝ մարզպետարան եկածի առաջ բացում է ուղեփակոցը: Նախկինում անմիջականորեն մարզպետարանի ենթակայության ներքո էին մարզի հանրակրթական դպրոցները եւ պետական առողջապահական հիմնարկները: Դրանք մարզպետարանները կառավարում էին ԿԳՄՍ եւ առողջապահության նախարարությունների հետ համատեղ: Մի քանի տարի է, ինչ մարզերի քաղաքներում գործող պետական բժշկական կենտրոնները հանվել են մարզպետարանների ենթակայությունից եւ կառավարվում են միայն առողջապահության նախարարության կողմից: Մարզերում գործող ավագ դպրոցները, վարժարանները եւս դուրս են բերվել մարզպետի աշխատակազմի ենթակայությունից եւ կառավարվում են միայն ԿԳՄՍ նախարարության կողմից:

Տավուշի մարզպետարանում տարբեր միջոցառումներ են անցկացվում, աշխատանքային հանդիպումներում, մարզխորհրդի նիստերում քննարկվում են համայնքներում պետական եւ սուբվենցիոն ծրագրերի ընթացքը, համայնքների կողմից տեղական բյուջեների հավաքագրման, սեփական եկամուտների կատարողականի ցուցանիշները: Սակայն երբ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ անում համայնքներում իրականացվող սուբվենցիոն ծրագրերի, համայնքներում տեղական բյուջեների կատարողականի մասին, հաճախ պատասխան եմ ստանում՝ այդ հարցերով դիմել համայնքապետարաններ: Տավուշի մարզպետի աշխատակազմը, համեմատաբար բարձր աշխատավարձից զատ, տարեկան մոտ 65 միլիոն դրամ պարգեւավճար է ստանում: Աշխատանքային ոմր նվաճումների կամ արտաժամյա ինչ աշխատանքի դիմաց են մարզպետարանի պաշտոնյաներն առատորեն պարգեւատրվում: Այս հարցին մարզպետարանից պատասխանել են, որ պարգեւավճարները մարզպետարանի քաղաքացիական ծառայողներին տրամադրվում համաձայն ՀՀ կառավարության 20.10.2011թ. թիվ 1510-Ն որոշմամբ սահմանված կարգի: Այդ որոշումը ՀՀ պետական կառավարման դրությամբ մարզպետի աշխատակազմի աշխատակիցները, ՀՀ կառավարության 20.10.2011թ. թիվ 1510-Ն եւ 27.11.2025թ. թիվ 1712-Լ որոշումներով սահմանված կարգի համաձայն, ստացել են 29.155.4 հազար դրամի պարգեւավճարներ: 2026թ. ապրիլի 17-ի դրությամբ դրամական օգնություն է արվել 125 ընտանիքի, ընդհանուր՝ 6 մլն 345 հազ. դրամ գումարի չափով»:

Հունիսի 4-ին նոր հարցում եմ արել պարգեւավճարների եւ կարիքավորներին տրված դրամական աջակցության մասին: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են, որ հունիսի 4-ի դրությամբ մարզպետի աշխատակազմի աշխատակիցները ստացել են 25 միլիոն 52 հազար 400 դրամի պարգեւավճար: Իսկ մարզի կարիքավորներին տրված աջակցության գումարների մասին հայտնել են. «2-րդ կետի վերաբերյալ Ձեզ պատասխանվել է 2026 թվականի ապրիլի 22-ի թիվ 03/21/01972-2026 գրության 2-րդ կետով: Դեռեւս դրամական օգնություն չի տրվել»: Ապրիլի 17-ին մարզպետարանի պաշտոնյաները ստացել են 29 միլիոն 155 հազար 400 դրամի պարգեւավճար, իսկ դրանից մոտ մեկուկես ամիս հետո, հունիսի 4-ի դրությամբ՝ 25 միլիոն 52 հազար 400 դրամի պարգեւավճար, ավելի քան 4 միլիոն դրամի պարգեւավճարները ՞մտ են վերադարձրել պետբյուջե:

Այս հանելուկը ցույց է տալիս, որ մարզպետն ու մարզպետի աշխատակազմը վատ են աշխատում, պետբյուջեի փողերը վատ են հաշվում, ուստի չպետք է պարգեւատրվեն: Տավուշի մարզպետի աշխատակազմում 76 հաստիք կա, որից 10-ը թափուր է: Մարզպետն ու մարզպետի աշխատակազմը՝ 66 պաշտոնյա, պետբյուջեից բազում անգամ ավելի մեծ պարգեւավճար են ստացել, քան՝ մարզի կարիքավորները: Սա է Նիկոլ Փաշինյանի «ժողովրդական իշխանությունը»:

Նյութերը՝ Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆԻ

ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺՎԵԼ Է

Ճառն ընկավ, կացնավորը շատացավ. Ռուբեն Վարդանյանը շուրջ 3 տարի տանջվում է Բաքվի բանտում, իսկ Դիլիջանի համայնքապետարանը Ռուբեն Վարդանյանի ընկերությանը դատի է տվել՝ դատարանից խնդրելով լուծել այդ ընկերության կողմից Դիլիջանի կենտրոնում զբոսայգու տարածքի վարձակալության պայմանագիրը, որի ժամկետը լրանում է 2030 թվականին: Ռ. Վարդանյանին պատկանող եւ նրա հետ սերտ առնչություններ ունեցող ընկերություններին դատի է տվել նաեւ Դիլիջանի համայնքապետարանի հետ սերտ կապեր ունեցող, Դիլիջանում մեծ ծրագրեր իրականացնող «Գրին Ռոք» ՍՊԸ-ն:

ՍՊԸ-ի ներկայացուցիչը 2025թ. օգոստոսի 21-ին հայցադիմում է ներկայացրել Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան՝ ընդդեմ «Դիս Փրոփերթիս» բարեգործական հիմնադրամի, «Դիլիջան Դեւելոփմենթ» հիմնադրամի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք՝ «Իմպուլս Մենեջմենթ Քոմփանի» ՓԲԸ-ի, «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի, «Դիլիջան Դեւելոփմենթ Քամփնի» ՓԲԸ-ի եւ «Ասեթ Քոնթրոլ Մենեջմենթ Քամփնի» ՓԲԸ-ի՝ պատասխանողներին նախագծերի համատեղ իրականացման 2023 թ. ապրիլի 20-ի պայմանագրով վերջիններիս վրա դրված պարտավորությունները կատարելուն պարտավորեցնելու, ինչպես նաեւ՝ նախագծերի համատեղ իրականացման 2023 թ. ապրիլի 20-ի պայմանագրով եւ անշարժ գույքի առքուվաճառքի 2023 թ. ապրիլի 19-ի պայմանագրով նախատեսված հայցվորի պարտավորությունների կատարման ժամկետները մինչեւ պատասխանողների կողմից իրենց պարտավորությունների ամբողջական կատարումը հետաձգված համարելու պահանջով: «Գրին Ռոք» ՍՊԸ-ի ներկայացուցիչը միաժամանակ միջնորդություն է ներկայացրել դատարան, որով խնդրել է արգելել «Դիս Փրոփերթիս» բարեգործական հիմնադրամին եւ «Դիլիջան Դեւելոփմենթ» հիմնադրամին՝ «Գրին Ռոք» ՍՊԸ-ից պահանջելու եւ ստանալու նախագծերի համատեղ իրականացման պայմանագրի 3.2 կետով եւ 4.1 կետով նախատեսված գումարները:

Նախագահող դատավոր Վարդուհի Պապիկյանի 2025 թ. սեպտեմբերի 11-ի որոշմամբ միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին, մերժվել է: «Գրին Ռոք» ՍՊԸ-ն 2025թ. սեպտեմբերի 17-ի այդ որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել: 2025թ. հոկտեմբերի 10-ին վերաքննիչ քաղաքացիական դատարանը՝ Սամվել Մատինյանի նախագահությամբ, որոշել է «Գրին Ռոք» ՍՊԸ-ի վերաքննիչ բողոքը մերժել, այդ քաղաքացիական գործով Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2025 թ. սեպտեմբերի 11-ի «Հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին» որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՀԱՄԱՐ ՇԱՏ ԿԱՐԵՎՈՐ Է, ՈՐ ՊՈՒՏԻՆԸ ՃԱՆԱՉԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հայաստանում ԿԸՀ-ն հունիսի 14-ին հրապարակեց հունիսի 7-ին տեղի ունեցած ԱԺ ընտրությունների վերջնական արդյունքները: Կրեմլում, սակայն, դեռ չեն շտապում շնորհավորել Նիկոլ Փաշինյանին, թեեւ մինչ այդ Կրեմլի խոսնակ Դմիտրի Պեսկովն ասել էր, թե շնորհավորանքի հարցում սպասում են, մինչեւ կհրապարակվեն վերջնական արդյունքները: Առայժմ սկսել են իրենց զգացնել տալ Հայաստանի հանդեպ ՌԴ սահմանած սահմանափակումները:

Իշխանություններն իրենց օրակարգով են շարժվում առաջ, ընդդիմադիրները՝ իրենց: Ու տպավորություն է, թե հասարակ ժողովուրդն է, որ տուժելու է քաղաքական գործիչների կատարած քայլերի, արած հայտարարությունների հետեւանքներից, ինչպես սովորաբար լինում է: Թեեւ այժմյան կոնկրետ դեպքում՝ այդ նույն ժողովրդի մի ստվար հատվածը, մեծ հաշվով, դժգոհելու տեղ չունի, որովհետեւ, ի վերջո, իր կատարած ընտրությամբ է Հայաստանի համար առաջիկա հինգ տարվա կտրվածքով ձեւավորվել իշխանություն, որն առաջիկայում ստանձնելու է երկրի ղեկը: Ու հիմա՝ իշխանություն-ընդդիմություն զուգահեռ իրականությունների եւ ծուռ հայելիների սենյակի վերածված Հայաստանի այժմյան իրավիճակում, թերեւս ամենակարեւոր հարցը Ռուսաստանի հետ հարաբերություններն են, որովհետեւ լարվածությունը քաղաքականից տարվեց նաեւ տնտեսական ոլորտի վրա, հատկապես Հայաստանի համար ամենացավոտն է լինելու: Ինձ հետաքրքիր չեն այս առնչությամբ ո՛չ իշխանական, ո՛չ ընդդիմադիր գործիչների հայտարարությունները: «Ճառ ասողների» պակաս երբեք չենք ունեցել: «Զանգ կախողներին» միշտ էլ մատների վրա են հաշվել: Ինձ ավելի շատ հետաքրքիր է, թե, օրինակ, տաքսիում կամ հանրային տրանսպորտում, թաղի մթերային խանութում կամ բակի «բեսեդկայում» ինչ են խոսում եւ ինչ են քննարկում: Ինձ առավել շատ հետաքրքիր է, եթե հանրագումարի բերենք՝ Հայաստանի «ժողովրդական քաղաքագիտական մտքի» հետ ծանոթանալը: Ու հենց այդ «մտքից» վերցված թեզիսների հետ կապված էլ ինձ թույլ կտամ մի քանի դիտարկում անել:

Նիկոլ Փաշինյանի համար հիմա շատ կարեւոր է, որ կարողանա Ռուսաստանի հետ պայմանավորվել: Նա հասկանում է, թերեւս (ամեն դեպքում՝ նման հույս ունենք), որ «ծիրանը կտանենք Լեհաստան», «ծաղիկները կտանենք Բալթիկա» եւ այլ նմանատիպ թեզերը գուցե կարճ ժամանակով մեդիա-քարոզչական էֆեկտ ունենում են, բայց ռեալ առումով զրոյական արդյունք են՝ ծխածկույթ, որի հետեւում ոչինչ չկա: Նիկոլ Փաշինյանի համար հիմա շատ կարեւոր է, որ Մոսկվան, թեկուզ շատ ուշացումով, գոնե մի կեսբերան ճանաչի Հայաստանում տեղի ունեցած պառլամենտական ընտրությունները: Որովհետեւ հասկանում է, որ հակառակի հետեւանքները շատ ծանր են լինելու: Որովհետեւ հասկանում է, որ հակառակ դեպքում իր՝ որպես Հայաստանի իշխանության ղեկավարի եւ, առհասարակ, Հայաստանի իշխանությունների կարգավիճակը դրվելու է մի տեսակ՝ «օրենքից դուրս» վիճակում, մոտավորապես նույն, ինչ հիմա Զելենսկու եւ նրա թիմի կարգավիճակն է: Ես չգիտեմ՝ Հայաստանում պատկերացնո՞ւմ են արդյոք, թե՝ ոչ, հատկապես Նիկոլ Փաշինյանին ընտրողները, սակայն Հայաստանն է, որ պետք է շահագրգռված լինի, որ Ռուսաստանի հետ ունենա լավ հարաբերություններ: Ռուսաստանի համար մենք չափից դուրս փոքր ենք՝ որպես ուժ, որպես տնտեսական հզորություն, որպեսզի կարողանանք ինչ-որ բան անել, որ մեզ հետ հաշվի նստեն: Չինական Ծանհայի մի թաղամասը գուցե ավելի ազդեցիկ լինի, քան՝ Հայաստանը: Կեղծ հայրենասիրություն խաղալու կարիք չկա: Նաեւ՝ կեղծ թեզիսների ազդեցության տակ մնալն էլ է սխալ: Չի կարելի առաջնորդվել այն թեզով, թե Ռուսաստանը չափազանց թուլացել է, փլուզման եզրին է, ու ինչ ուզել, կարելի է անել: Պուտինը շատ համբերատար մարդ է: Նա սիրում է թերեւս իրեն մարտահրավեր նետածների հետ կռվելիս ընտրել հյուծման մարտավարությունը: Աստված չտա, եթե Հայաստանի դեպքում էլ նույնը կիրառվի:

Խնդիրը Ռուսաստանի մեջ չէ: Խնդիրը մեր մեջ է: Մենք ինչ-որ բաներ ենք ուզում ինքներս մեզ կամ մյուսներին ապացուցել: Իմ կարծիքով, հիմա Հայաստանը Ռուսաստանի հետ «առեւտրի» է պատրաստվում: Ընդ որում՝ Ռուսաստանն իր պայմանները ներկայացրել է: Հայաստանում, գոնե հետընտրական որոշ պրոցեսներ տեսնելով, փորձում են «առեւտրի» համար ինչ-ինչ «հաղթաթղթեր» ստեղծել իրենց համար, որպեսզի լրիվ ձեռնունայն չլինեն: Դա կարող է լինել TRIPP-ի, ռազմաբազայի, ռուսամետ ընդդիմության ու գործիչների, Առաքելական եկեղեցու հանդեպ վերաբերմունքի եւ այլ բաների տեսքով: Հարցն այն է, թե այդ «հաղթաթղթերը» երբ դրվեն սեղանին՝ Կրեմլը ինչպես կարձագանքի: Կա վտանգ, որ արձագանքը կարող է լինել շատ կտրուկ եւ բացասական: Հատկապես, երբ ռուսական քաղաքական վերնախավի առաջին էշելոնից Հայաստանի՝ «ուկրաինական սցենարով» առաջ գնալու մասին հայտարարություններ էլ են հնչել:

Սերոբ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՁՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 17.06.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԱՆԳԱՄ ՊԱՏԵՐԻ ՏԱԿ ՎԱԽԵՆՈՒՄ ԵՆ ԽՈՍԵԼ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

«Հրապարակի» զրուցակիցը «Ժողովրդական համախմբում» կուսակցության առաջնորդ **Սուրեն Պետրոսյանն** է: Նրա գլխավորած ուժը հունիսի 7-ին կայացած խորհրդարանական ընտրություններում հավաքել է 5 հազար 269 ձայն:

- Ընտրությունների ավարտից հետո ընդդիմադիր գրեթե բոլոր ուժերը հայտարարում են, որ չեն ճանաչում ընտրությունների արդյունքները եւ այն համարում են ոչ լեգիտիմ: Ի դեպ, մի քանի ընդդիմադիր կուսակցություններ նաեւ հայտարարությամբ են հանդես եկել՝ պնդելով, որ հունիսի 7-ին տեղի ունեցած ընտրություններն արդար եւ թափանցիկ չեն, ուստիեւ չեն կարող համարվել լեգիտիմ: Դուք ի՞նչ եք մտածում այդ մասով եւ ինչո՞ւ չեք միացել ընդդիմադիրների հայտարարությանը:

- Նախ ասեմ, որ մենք այդ հայտարարության մասին ընդհանրապես տեղյակ չենք եղել, մեզ ընդհանրապես ոչ ոք չի դիմել, եւ մենք ոչինչ չենք իմացել, իմացել ենք միայն պոստֆակտում: Բայց դրանից բան չի փոխվում, մեր դիրքորոշումը մնում է նույնը, միասին կստորագրենք, թե առանձին կհայտարարենք, դրանից էական բան չի փոխվում, կարեւորն այն է, որ մենք նույնպես այս ընտրությունների արդյունքները համարում ենք ոչ լեգիտիմ:

- Շատ է խոսվում այն մասին, որ ընտրակեղծարարությունների են դիմել իշխանությունները, ձայներ են կեղծել: Ի՞նչ եք կարծում՝ իսկապե՞ս ընտրությունները կեղծվել են, մեծ հաշվով:

- Այս ընտրությունները երրորդ հանրապետության ամենաոչքաղաքական ընտրություններն էին: Այս ընտրություններին չկար որեւէ քաղաքական միտք, չկար օրակարգ, չկար բովանդակություն: Խոսքը վերաբերում է, բնականաբար, թե՛ իշխանությանը, թե՛ տիտղոսակիր ընդդիմությանը: Այդ ողջ ընթացքում՝ նախընտրական շրջանում ես տեսել եմ բաներ, որոնցից կարող եմ եզրակացնել, որ իշխանությունը ձեւավորել է վախի մթնոլորտ, օրինակ՝ պատերազմ տեղի կունենա, եթե մենք չընտրվենք եւ այլն: Հասարակության տարբեր շերտեր ուղղակի տեռորի ենթարկվեցին: Մարդիկ, անգամ անհամաձայն լինելով իշխանության հետ, վախից դրդված՝ չէին արտահայտվում, չէին ասում, որ չեն կիսում իշխանության կարծիքը: Մարդիկ անգամ պատերի տակ վախենում են խոսել իշխանություններից: Դրան զուգահեռ, մյուս կողմում ես չտեսա կոնկրետ գաղափար, կար գործընթաց, որի հիմքում ընկած էր ֆինանսը: Գաղափար չկար, միայն ֆինանս:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Միայն ՌԴ-ից ժամանողներին են ծանուցել

Հունիսի 7-ի խորհրդարանական ընտրության եւ դրան նախորդած օրերին ռազմական ոստիկանությունը սահմանային անցակետերում եւ օդանավակայաններում արական սեռի ՀՀ քաղաքացիներին հանձնում էր 25-օրյա վարժական հավաքների մասնակցության ծանուցագրեր կամ վերցնում նրանց անձնական տվյալները՝ հետագայում այդ ծանուցագրերն ուղարկելու համար: Թիրախում էին երկքաղաքացիություն ունեցող անձինք, որոնք գալիս էին Հայաստան՝ իրենց սահմանադրական իրավունքն իրացնելու՝ ընտրությանը մասնակցելու համար: Սակայն, մեր տեղեկություններով, ռազմական ոստիկանության տեսադաշտում են հայտնվել ոչ թե առհասարակ երկքաղաքացիները, այլ այն անձինք, որոնք Ռուսաստանից են ժամանել Հայաստան: Միայն ՀՀ եւ ՌԴ երկքաղաքացիություն ունեցող անձանց է «Զվարթնոց» օդանավակայանում վարժական հավաքներին մասնակցելու ծանուցագիր տրվել: Նրանց մեջ են հայտնվել նաեւ Հայաստանում մշտական բնակություն ունեցող այն տղամարդիկ, որոնք կարճ ժամանակով գնացել էին ՌԴ եւ նախընտրական շրջանում վերադարձել են Հայաստան: Օրինակ, մեկը տասն օրով գնացել է Ռուսաստանում բնակվող ազգականին հյուր, մյուսը՝ հարսանիքի մասնակցելու եւ ետվերադարձին ընկել ՌՈ-ի ճանկը:

Անանա ՊԱՊԻԿՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am